կուսդ մարիամ՝ աղաչեմ զքո միա-
ծինն՝ թողուլ ըզ մեղս որդւոց նո-
ցին՝ յոր օրհնեալ"։

Հօրան ընծայեալ յերկրէ յերկինս՝
յոր համբառնամք առ քեզ զհոգիս՝
յօր լըսեալ քո զաւետիս՝ խընդրեմ
լինիլ մեզ լըսելիս՝ զձայն աւետեաց
քո միածնին՝ եթէ եկայք օրհնեալք
հօր իմ՝ յոր օրհն"։

Զայնժամ առ քեզ զտէր պաղատիմք՝
և առաջի քոյ անկանիմք՝ աղաչեմք
միածնին՝ շիջո՛ ՚ի մէնջ ըզ բոց հնո-
ցին՝ տուր արտասուօք զմեղըս ջընջել՝
և վերըստին զմեզ նորոգել՝ յոր"։

Պըսակաւոր ճարտարութեամբ՝ անցեր ընդ
ծով կենցաղս անհեռ՝ վերաբերեմ
ընդ ալեկոծս՝ զմեզ ՚ի յալեաց մե-
ղաց ծովէս՝ պաղատանօք քո բարգաւ-
նեն՝ անապականն քոյ ծընողին՝ յոր"։



Լուծ

Յորժ ձյն հինգերորդի տառս ի Հրաշքըտեն. և ձյն հինգերորդի դարձն. և՚ի տէ ի Հաւ ժեռողն ՎԲԷ.

Ոնուագայթեան բանն ՚ի հօրէ յոր հինգերորդըն հրամայէ՝ . բղխել ՚ի ջրոց սեռս կայտառաց՝ և թռչունս օդականաց՝ . իսկ ՚ի դարուն հինգ մըկըրտին՝ յամայն և ՚ի ծովն խորայէըն հին՝ . տացուք հրաշից ներգործողին՝ պատիւ և փառս անեղ բանին ՚ն։

Ս՝ըքրապէս օրինակի՝ առաքելոցըն քո՝ . որք ՚ի ծովէն տիեզերական՝ ՚ի յերկնային կոչեցան՝ . անցին ընդ ծով աշխարհական՝ և ՚ի հոգին մը կըրտեցան՝ . տացուք"։

Յ՚ուրախութի՝ ննան անզրաւական՝ ՚ի հարսանիան անապական՝ . զմեզ առաքեաց հայրըն փառաց՝ հրաւիրատուք տըրոմականաց՝ . որք հարսանեայն յոյն հայցեցէք՝ ընդ ձեզ լինիլ մեզ պարակից՝ . տաց"։

Ն՝որոգծըղք տիեզերաց ՚ի նախահօրըն

յանցանաց՝ ․Նորափետուր զարդարե-
ցէք՝ զեկեղեցիս հեթանոսաց՝ ․ պա-
ղատեցէք առ Նոյն գըթած՝ զՄեզ
Նորոգել ՚ի Հնոյ մեղաց՝ ․ տա՛ ։

Ը՟Նօղ էիցըս համայնից՝ արարա-
ծոց ՚ի յանգոյից՝ ․ Նոյն շինեցեր զե-
կեղեցի՝ վէմդ ՚ի վե՟ վիմին բանի՝ ․
ը՟նդ եդեալ հիմունս ՚ի Նոր սիոն՝ ըզ
Մեզ յօդեա շինմամբ ՚ի նոյն՝ ․ տա՛ ։

Ս՟ուրախացմա գնացիւք գետոց՝ քա-
ղաք ՚ի քէն շինեալ յո՟՝ ․ յորմէ վը-
տակք շնորհաց հոսին՝ զոգիս մարդ-
կան ոռոգանեն՝ ․ արբո և մեզ ՚ի Ջրոյն
կենաց՝ հայցմամբ հոգւոյն մաքրո-
ւակաց՝ ․ զի բանաւոր երկիրըղքո՝
պըտղաբերցի ՚ի փառ՟ ու՟ ս քո՟ ։

---

ԿՐԿ ՏՕ Ս ԷՋԷՐՈՐԴԻ ԱՌՈՒՐ ԱՀՐՈՂՀՈՒԹՆ․
և ՏՕ Ս ԷՋԷՐՈՐԴԻ ՏԱՃԱՐԻՆ․ և ՚ի ԽԱՉԷԼՈՒ-
ԹԵԱՆՆ ՀԱՐԻ․

Զհանդուրժեալ բնութե՟ բա-
րութն՝ ունիլ միայն զանձառ բա-
րին՝ ․ այլ ստեղծեալ զմարդ մեր-
պատկերին՝ ՚ի վեցերորդ աւուրն՝ ․

և՝ ՚ի յերրորդ ժամ զկողածին՝ ՚ի յօգ-
նութ̅ն եա հողածնին՝ . զորս ՚ի դրախ-
տին եդ վայելել՝ բայց ՚ի պտղոյն
մահու ա՛րգե՟լ։

Պատուիրանազանցեալ առ դատողին յետ յան-
ցանաց ադամըն հին՝ . զկինըն պատ-
ճառ եղեալ խաբման՝ և կինըն զօ-
ձըն դաւաճան՝ . որով երկիրս այս
անիծաւ՝ փուշ և տատասկ ՚ի սմա բու-
սաւ՝ . վրէժխնդիր մահու մարդոյն տըւաւ՝
դառնալ ՚ի հող ուստի առե՛ալ զծա՟ւ։

Ս ընդէջել փութայր հայրըն փառաց՝
ընդ գիր պարտեաց մեր յանցանաց՝ .
որով զգեցաւ որդին գըթած ՚ի վեց
դարուն զմարմին մեղաց՝ . հօր հա-
ճութեամբ ՚ի մահ խաչին՝ եկըն կա-
մաւ ՚ի յարութեան՝ . զառըն զենաւ
՚ի հին զատկին՝ փոխան զաւանացն
օրհնեա՛լկէ՟ն։

Ոսհերէ լուսոյ պատուիրանին՝ ար-
դարութե զանապարհին՝ . բարձրանա-
լով քո ՚ի խաչին՝ բարձրացուցեր զմեզ
՚ի յերկինս՝ . քո անպատում խնամք

 հու

հութեանդ՝ և կամաւոր խաչելութեանդ.
հաշտեա՛ց ընդ մեզ տէր գթութեամբ՝ և
թո՛ղ ըզ մեղս ողորմութեամբ քո մեծաւ:

Սոսկալիդ՝ սերոբէից՝ և ահաւորըդ
քերոբէից՝. խոնարհեցեր՝ 'ի չարչարանս՝
չարչարելի բնութեամբ մարդկան՝. 'ի խա
չին գամեղս ըմպանէր՝ և զդառնականէք
մահու լուծէր՝. հաշտեա՛ց ընդ:

Վեհագոյն բնութեանց էից՝ և արա
րիչ ըդ բոլորից՝. յորժամ ծագես
զխաչիդ նշան՝ 'ի գալստեան քո յ
մեծավայելչագոյն. զերկրպագուս յորժամ հա
ւատով՝ լուսաւորեա՛ նորին լուսով.
զի համաձայն խաչազգեցին՝ ընդ քեզ
օրհնեմք յաւիտեանս յաւիտենից:

Կարգ վ͞ն Եօթներորդի աւուր Ահեղ բարեկենդանին՝ և վ͞ն եօթներորդի տարւոյն. և 'ի խորհուրդ հանգստեանն տ͞ն:

Տէ՛րն յետ ստեղծման արարա
ծոց՝ հանգեաւ յեօթնն օրն 'ի
գործոց՝. այն որ հանգիստ աշխատե
լոց՝ և կամքըն գործ է եղելոց՝. ուս
տի և մեզ յոյս հաստատուն՝ եղ հան

գրաստեամբըն շարաւթուն՝ . թէ աստ
գործել զգործս ոչ՝ անդէն հանգ
չիլ ընդ աստուածոյ։
Բաբունաբար վարդապետիւք՝ յօրի
նակէ տէրն խրատիւք․ որ՚ի յերկրորդ
արարչութեն՝ յետ կատարման անօրէ
նութեն՝ . յեօթներորդ օր հանգըս
տեան՝ իջել մարմնով ՚ի գերեզման․
զկապեալ հոգիսըն վերածեաց՝ զա
նանց հանգիստըն պատրաստեալ։
Զօղդ որ ՚ի քոյդ կողէ ցօղեալ՝ բը
ժըշկեացէ ըզհանգուցեալսն․ իջցէ
՚ի հող մահու նոցին՝ և բուսուսցէ
յօրըն վերջին․ կենդանարար ձայնիւ
ըդ քո՝ կոչեա զնս ՚ի կեանըս քո՝ . և
դասեցո ընդ արդարոցն՝ երգել քեզ
փառս ընդ զըւարթնոցն։
Դիւծեալ զընութիս կենաց ու
նօղ՝ դարձոյց յանցանքն ՚ի մահու
հող՝ . իսկ անմահիդ մեռելութիւն՝
շնորհեաց դարձեալ զանմահութի՝ .
զորս են ը քեզ թաղեալ մահուամբ՝
աւազանին մկրտութե՝ . յարո ընդ


քեզ

քեզ քոյին փառօք՝ արեգական նը
նման լուսաւորեսցի։

Փայլին արդարքն յարքայութեան՝ և ճգնաւորքն ՚ի հանգըստեան. մարտի րոսքըն պսակին՝ և կուսանաց լապ տերքն վառին. դասեցո տէր ընդ նո սին՝ որք զքեզ մեծ խոստովանին. արդարութեամբ մի դատեսցին. այլ գը թութեամբ քո քաւեսցին։

Քո անպատում խնամարհութեամբդ՝ որ թաղեցար մեռելութեամբ. և յարուցեր յորդւոց մարդկան՝ որք հաւատով ՚ի քեզ անկան. յարո և զմեզ արդա րութեամբ՝ և զննջեցեալսն ողորմութեամբ. զի կենդանեացըս բերանով տացին քեզ փառք ընդ Հօր երկնաւոր Հոգւոյն ճշմարտի։

---

Մաղթանք Պահոց յետ Արարչականին։

Խաչ քո եղիցի մեզ ապաւէն Տէր Յիսուս։ Յորժամ երևիս փառօք Հօր ընդ ամպս լուսաւորս, յայնժամ մեք մի ամաչեսցուք յուսացեալքս ՚ի քեզ. այլ զօրութեամբ քով մեծաւ



բերկ

բերկրեսցուք ընդ աջմէ քումմէ ողջ զորդիս լուսոյ և որդիս տուընջեան:

Քարոզ:

Աղաչեսցուք զամենակալն Աստուած՝ զի պահպանեսցէ զժողովուրդս իւր ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչին իւրոյ ՚ի խաղաղութեան: Ամենակալ Տէր Աստուած մեր՝ կեցո՛ և ողորմեա՛:

Մաղթանք Պահոց:

Օգնեա՛ մեզ Տէր • օգնեա՛ մեզ Աստուած փրկիչ մեր՝ վասն մեծի փառաց անուան քո: Տէր՝ փրկեա՛ զմեզ և քաւեա՛ զմեղս մեր վասն անուան քո սրբոյ: Պահպանել պահեա՛ զաւ՚ի քեզ ապաւինեալ զժողովուրդս քո ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչի քո՚ի խաղաղութեան: Փրկեա՛ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն: Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյդ: այժմ և":

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛:

Բարերար և բազում ողորմ Աստուած":

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս • ամէն:

Հայր մեր որ յերկինս":

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Արևագալի ժամուն։ Որ քառորդ ՚ի դէմս Հոգւոյն սրբոյ. ասացեալ ՚ի դէմս Յարութեան Քրիստոսի, և երևման աշակերտացն.

Եղիցի անուն Տեառն օրհնեալ յաւիտեան. զի յառաջ քան զարև է անուն նորա։
՚Ի նմա օրհնեսցին ամենայն ազգք երկրի. և ամենայն ազինք երանեսցեն նմա։
Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի՝ որ առնէ սքանչելիս միայն. և օրհնեալ է անուն փառաց նորա յաւիտեան. լցցի փառօք նորա ամենայն երկիր. եղիցի եղիցի։
Փառք Հօր և որդւոյ և՟։


Լու

Նա եւ խաղաղութեան զմեր աղաչես-
ցուք · ընկալ կեցո եւ ողորմեա։
Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ
եւ Հոգւոյն սրբոյ։ Այժմ եւ"։

## Նոյն արեւագալին։

Յարեւելից մինչ ի մուտս · ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ · ամենայն ազգք եւ ազինք յօրհնութիւն նոր օրհնեսցէք զարարիչն արարածոց · որ ծագեաց ընդ լոյս արեգականն այսօր յաշխարհս։

Եկեղեցիք սրբոց՝ փառաւոր նիւթք ամենասուրբ Երրորդութեան · յառաւօտս լուսոյ զառաւօտ խաղաղութեան Քրիստոսի գովեսցէք ընդ Հօր եւ Հոգւոյն · որ ծագեաց ընդ լոյս գիտութեանն խորոց իմաստից։

## Յորդորակ։

Յարեւելից յարեւմուտս մանկունք Սիօնի · օրհնեսցէք միշտ անդադար ընդ ծագողն լուսոյ։

Եկեղեցիք արդարոց և փառաւորեա-
նինջք · բարեբանեցէք որ եա զն
մատուռն լուսոյ։

Քարոզ։

Յարևելից մինչև ՚ի մուտս արևու-
ընդ ա͞մ տեղիս քրիստոնէութե-
ւր և կարդան զանուն տ͞ն սրբութ͞ե,
ո͞ր աղօթիւք ն͞ց և բարեխօսութ͞բն
մեզ ողորմեսցի։ Ուխտիւք զա͞ծ ա-
ղաչեսցուք · զի նա փրկեսցէ զմեզ ՚ի
մեղաց և ՚ի ցանկութենէ աշխարհի։
Ընկալցի զուխտս և զխնդրուածս
սրտից մերոց · և արժանի արասցէ ըզ
մեզ հաւատոց և պատուիրանաց իւրոց
ընդ ա͞մ ս͞բս իւր · ամենա″։
Զառաւօտս լուսոյ և զառաջիկայ
օրս խաղաղութեամբ անցուցանել՝
հաւատով ՚ի տ͞նէ խնդրեսցուք։
Զհրեշտակ։ Զքաւութ͞ի։ Զս͞բս։
Եւ ևս միա։ Զանձինս։ Ողորմեայ։

Աղօ͞թք։

Յարևելից մինչև ՚ի մուտս արևու-
օրհնեալ ես տ͞ր · վ͞ս զի · Թագաւոր

քաղցր ես. և անուն քո աՀեղ է ընդ
ա՟մ աշխարՀս: Ողորմեսցին սաղմոս-
երգութե՟ք մեր առաջի քո. և ելցեն
խրատունք յարդարութե՟ քումմէ՛ ՚ի մր
կարութս մեր. և փրկեսցի ամենայնք
անունք քո: Եւ մեք արժանի եղիցուք
կալ ՚ի պատուիրանի քում. և քեզ
երգել զօրՀնութի և զփառս Հօր և՛:

Խաղաղութեան ամենեցուն:

Ք՟ս մշտնջենաւոր՝ ա՟ծ յաւիտենակն.
որ ՚ի սուրբն աշխարՀս լոյս ծագե-
ցեր՝ և լուսաւորեցեր զմեզ ՚ի խա-
ւարային մեղաց մերոց: Որ վ՟ս մեր ՚ի
չափաւորութի եկիր անչափդ ա՟ծ. և
Հեղեալ ծաւալեցեր զշնորՀս Հոգ-
ւոյդ ս՟բյ յարարածս քո: Այժմ և
յաւիտեանս ժամանակաց բարերա-
նեալ ես ամենամեծդ Ք՟ս ընդ Հօր
և ամենասուրբ Հոգւոյդ: Այժմ և՛:

Փոխ Սաղմոս, 99:

Աղաղակեցէք առ տ՟ր ա՟մ երկիր.
ծառայեցէք տ՟ն ուրախութբ:
Մտէք առաջի նր ցնծութբ. ծանիրուք
զի նա է տ՟ր ա՟ծ մեր:

Նա՛ արար զմեզ և ո՛չ մեք էաք․ մեք
ժողովուրդք և խաշն արօտի նր։
Մտէ՛ք ընդ դրունս նր խոստովանու-
թբ․ և օրհնութբ ՚ի յարկս նր։
Խոստովան եղերո՛ւք տն․ և օրհնե-
ցէ՛ք զանուն նր։
Քա՛ղցր է տէր՝ յաւիտեան է ողորմութի
նր․ յազգէ մինչև յազգ է ճշմար-
տութիւն նր։

Նշէ։

Ձերգնաւորք Աստուծոյ և
ժառանգորդք երկնից արքայութեն․
որք փոխանակեալ էք զանցա-
ւորս առէք զանանցն բարութիւն․
բարեխօսեցէ՛ք առ տր վասն ման-
կանց եկեղեցւոյ։
Նահատակք պանծալիք և սիրե-
ցեալք ՚ի յերկնաւոր հօրէն․ ո-
րք մկրտեցայք ընդ Քի ա-
րեամբ ձերով ՚ի մանց խաչէն․ բան։
Մարտիրոսք ցանկալիք․ և օթե-



վանք

վանք Հոգւոյն ճշմարտութեան ·
Ո՛վ մարտիրոսք յաղթեցիք հոգւով կա-
րեաց և ցանկութեանց · բարե՛"։
Պսակելիքդ աշխարհի · և բաղձա-
լիք վերնոցն պետութեանց · որք
երանութեան մասին հասիք քան զա-
մենայն որդիս մարդկան · բա՛"։
Ամմաւորք պատարագք մանկունք
տիօք և կատարեալք ի մեծութեան ·
որք փոխանակ կաթին արբիք
զգինին զմայլեցուցիչն · բա՛"։

Յորդորակ։

Ճգնաւորք ճշմարիտք վե-
կայք Քրիստոսի · բարեխօսեցէք առ
Տէր վասն անձանց մերոց։
Նահատակք կենդանիք սիրողք
Քրիստոսի · որք չարչարեցայք մարմնով
վասն անուանն Տեառն։
Մարտիրոսք ցանկալիք մարդկան
ըղձալիք · հայցեցէք ի սուրբ Հո-

 գւոյն

գուցին առ մեզ ըղղ բարիս։
Պաշտելեաց վերնոց դասուց․ պար ծանք անձնարհնի․ խորհրդեցէք զխա ղաղութիւն առ եկեղեցւոյ։
Սամաւոր ոք պատուարակ գք․ հաստա կաւ մանկունք․ հաստեցեք լինել և մեզ ձեզ պլաւ կալկից։ Փ

Սաղմոս։

Աղաչեմք ողորմեաց տր բարերար․ աղաչեմք ողորմեաց։ Վսն աղօթից սբց ծնողին քո աղաչեմք ողորմեաց։

Յորդ։

Սբ ծնողք որդւոյն աղաչեսցուք զտր որք զհայրն պարտեցին՝ նեղութեան հալածեցին։ Լուսեղէն և երկնային անթառամ պսակացն արժանի եղեն։ Աղօթիւք նց և բարեխօսութեամբ մեզ ողորմեսցի։ Ամենակալ տր ած մեր՝ կեցո և ողորմեա։

Ողջն։

Սբ ես տր և ի սբս հանգուցեալ․ և մեք որ վկայիւքս աղաչեմք զքեզ

բարեխօսութե͞ամբ ս͞բ Ա͞ծածնին եւ աղա֊
չանօք ա͞մ ս͞րբոց քոց՝ մի՛ մերժեր զմեզ
յողորմութե͞նէ քումմէ. այլ կեցո՛ զմեզ
աղօթիւք սոցին. զի դու ես բազում
ողորմ ա͞ծ. եւ քեզ վայելէ փառք՝ իշ֊
խանութի՛ւն եւ պատիւ. այժմ եւ՛՛։

Օրհնեա՛ Տէր եւ ողորմեա՛։

Բարերար եւ բազում ողորմ ա͞ծ՛՛։

Սաղմոս, 62։

Ա͞Ծ Ա͞Ծ իմ, ես առ քեզ առաւօտ
առնեմ. ծարաւեցաւ առ քեզ հո֊
գի իմ. քանի՛ պապակեալ եւ՝ եւ մարմին իմ։
Ո͞պ երկիր անապատ եւ անջրդի՝ ուր
ո՛չ գոյ ՚ի նմա ճանապարհ։ Նոյնպէս
՚ի ս͞րբս երեւեցայց քեզ. տեսանել ինձ
զզօրութի͞ւն քո եւ զփառս քո։ Վ͞ն զի
լաւ է ինձ ողորմութի͞ւն քո քան զկեանս
իմ. եւ շրթունք իմ գովեսցեն զքեզ։
Նոյնպէս օրհնեցից զքեզ ՚ի կեանս իմ.
եւ յանուն քո համբարձից զձեռս իմ։
Որպէս ՚ի ճարպոյ պարարտութե͞ լցցի
անձն իմ. շրթամբք ցնծութե͞ օրհնես֊
ցէ զքեզ բերան իմ։ Օ՛ի թէ յիշէի
զքեզ յանկողնի իմում, ը͞ առաւօտս

 կան

կանխեալ խօսէի ընդ քեզ։ Զի եղեր
իմ օգնական․ ՚ի հովանի թևոց քոց
ցնծացայց։ Եկն զկնի քոյ անձն իմ
և զիս ընկալաւ աջ քո․ իսկ նոքա ՚ի
նանիր խնդրեցին զանձն իմ։ Մտցեն
՚ի ներքոյ անդնդոց երկրի․ մատնես
ցին ՚ի ձեռս սրոյ և բաժինք աղուէ
սուց եղիցին։ Թագաւոր յուսացաւ
՚ի Տր․ գովեսցին ամենեքեան ոյք երդ
նուն նովաւ․ խցցին բերանք այնո
ցիկ՝ ոյք խօսին զանօրէնութիւն։
Լուր ած աղօթից իմոց յաղաչել իմ
առ քեզ․ յերկիւղէ թշնամւոյն փրկ
կեա զանձն իմ։ Ծածկեացես զիս ՚ի
ժողովոց չարաց․ ՚ի բազմութենէ ոյք գոր
ծեն զանօրէնութի։ Ոյք սրեցին որպ
սուսեր զլեզուս իւրեանց․ լարեցին
զաղեղունս իւրեանց յիրս դառնութե։
Ձգել ՚ի գաղտնիս այնոցիկ՝ ոյք ու
ղիղ են սրտիւք․ յանկարծակի ձգես
ցեն ՚ի նա և ոչ՛ երկիցեն։ Ոյք զօրա
ցուցին յանձինս իւրեանց զբանս չա
րութե․ խորհեցան թագուցանել ինձ
որոգայթ․ և ասացին՝ ոչ տեսանէ
զնոսա ոք։

Քննեցին զանօրէնութի· պարտա-
սեցան ՚ի քննել զքննութի։ Մատի-
ցէ այր ՚ի խորութի սրտի իւրոյ· և
բարձր եղիցի ած։ Նետք տղայոց
եղեն վէրք նց· տկարացան ՚ի նն լե-
զուք նց· և խռովեցան ամենեքեան որք
հայէին ընդ նս։ Երկեաւ ամ մարդ
՚ի պատմել զգործս այ· և զարարածս
նր ՚ի միտ առին։ Ուրախ եղիցի ար-
դար ՚ի տր և յուսասցի ՚ի նա· Նովաւ
գովեսցին ամքն որք ուղիղ են
սրտիւք։

ԿԴ։

Լոյս արարիչ լուսոյ առաջին լոյս
բնակեալդ ՚ի լոյս անմատոյց
Հայր երկնաւոր՝ ՚ի դասուց լուսե-
ղինաց օրհնեալ· ՚ի ծագել լուսոյ
առաւօտուս՝ ծագեա ՚ի հոգիս մեր
զլոյս քո իմանալի։
Լոյս ՚ի լուսոյ՝ ծագումն արեգակն
արդար՝ · անճառ ծնունդ Հօր
Որդի· յառաջ քան զարև անուն քո

գովեալ ընդ Հօր. ՚ի ծագել լու՛՛։
Լոյս ՚ի Հօրէ բղխումն աղբիւր բարութեն. Հոգիդ սբ ած. ման-
կունք եկեղեցւոյ ընդ հրեշտակս ըզ քեզ բարեբանեն. ՚ի ծագել։
Լոյս էրբեակ և մի անբաժանելի սբ է երրորդութի. զքեզ ընդ երկ-
նայնոցն երկրածնիքըս միշտ փառ-
աւորեմք. ՚ի ծագել։

Յորդորակ։

Անեղանելիդ Որդի Հայր ամենա-
կալ. ընկալ զաղաչանս մեր քոց պաշտօնէից։ ՚Ի Հօրէ ծագումն ան-
ճառ. արեգակն արդար. ծագեա ՚ի յանձինս մեր ըզ լոյս ողորմութե։ ՚Ի Հօրէ բղխեալ Հոգի աղբիւր բարութե. լուսով քով լցո ըզ
մեզ յոյժ առատաւս։
Երէք անձինք և մի բնութիւն. մի աստուածութի. զքեզ խոստովանիմք
յաւէտ սբ երրորդութի։

Սաղմոս։

Լուսովդ քով Տէր տեսցուք լուսա
ւորեցուք. և ի նշան խաչ քո փրկիչ
հաւատացելոցս ապաւինելոցս։

Լուր մեզ Ած փրկիչ մեր. տուր
մեզ զխաղաղութիւն. և արա առ մեզ
զողորմութիւն քո մարդասէր Տէր։

Քարոզ։

Եւս և խաղաղութե զՏր աղ"։

Փառաւորեսցուք զամենակալն Ած
որ ծագեաց զլոյս առաւօտու յարա
րածս իւր. ծագեսցէ և այժմ զա
ռատ ողորմութի իւր ի վր փառաբանչաց
անուանն իւրոյ։ Ամէն"։

Աղօթք։

Ոառաւօտու աղօթս և զբանաւոր
պաշտօնս՝ ընկալ ամենակալ ամենա
մեծդ Ած ի քո անապականն և յերկ
նային խորանդ։ Ուղղեա առ մեզ
զարդարութե և զխաղաղութե քո զլոյս.
արա զմեզ որդիս լուսոյ և որդիս տը
ընջեան։ Որպ զի ի գալ աւուրս եր
կիւղածութբ վարեսցուք զկեանս մեր.
և առանց գայթակղութե կտրեսցուք։
զի դու ես օգնական և փրկիչ մեր.
և քեզ վայելէ փառք իշ"։

Տէր հովուեսցէ զիս. և ինձ ինչ ոչ պակասեսցի: Ի տեղւոջ դալարւոջ անդ բնակեցոյց զիս. և առ ջուրս հանգստեան սնոյց զիս: Դարձոյց զանձն իմ առ իս. և առաջնորդեաց ինձ ի ճանապարհս արդարութեան վս անուան իւրոյ: Թէպէտ և գնայցեմ ես ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց ի չարէ. զի դու Տր ընդ իս ես: Ցուպ քո և գաւազան, նոքա մխիթարեսցեն զիս: Պատրաստեցեր առաջի իմ սեղան. այն յանդիման նեղչաց իմոց: Օծեր իւղով զգլուխ իմ. բաժակ քո ոպ անպկ արբեցոյց զիս: Ողորմութի քո Տր զհետ իմ եկեսցէ զամ աւուրս կենաց իմոց. բնակել ինձ ի տուն Տն ընդ երկայն աւուրս: Ցոյց ինձ ճանապրհ՝ յոր և գնայցեմ. զի առ քեզ Տր համբարձի զանձն իմ: Փրկեա զիս ի թշնամեաց իմոց Տր. զի զքեզ ապաւէն ինձ արարի: Ուսո ինձ առնել զկամս քո՝ զի դու ես Ած իմ: Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ:

Վ՟ռ անուանքո ՟տր կեցուսցես զիս․
արդարու՟թ քով հանցես ՚ի նեղու՟է
զանձն իմ։ Ողորմու՟թ քով սատկեսցես
զթշնամիս իմ․ և կորուսցես զա՟մ նե
ղիչս անձին իմոյ՝ զի ես ծա՟յ քո եմ։
Ա՟ծ մեր ապաւէն և զօրու՟թի․ օգ՟նկն
՚ի վ՟ս նեղու՟եց որք գտին զմեզ յոյժ։
Վ՟սն ոչ երկիցուք մեք ՚ի խռովել
երկրի․ ՚ի փոփոխիլ լերանց ՚ի սիրտս
ծովու։ Գոչեցին և խռովեցան ջուրք
ն՟ց․ խռովեցան լերինք ՚ի զօրու՟է ն՟ր։
Գնացք գետոց ուրախ առնեն զքա
ղաքն ա՟յ․ և ս՟ր արար զյարկս իւր
բարձրեալն։ Ա՟ծ ՚ի մէջ ն՟ց՝ և նորա
մի՛ սասանեսցին․ օգնեսցէ ն՟ց ա՟ծ ՚ի
վաղորդենէ մինչև ՚ի վաղորդեան։
Խռովեցան հեթանոսք և խոնարհե
ցան թագաւորու՟թք․ ետ զձայն իւր
բարձրեալն՝ և խռովեցաւ երկիր։
Տ՟ր զօրու՟եց ընդ մեզ․ ընդունօղ է
մեր ա՟ծ յակոբայ։ Եկա՛յք և տեսէ՛ք
զգործս ա՟յ՝ որ արար զնշանս և զար
ւեստս ՚ի վ՟ր երկրի։ Ի՟հար զպատե՟րզմ
՚ի ծագաց մինչև ՚ի ծագս երկրի․



զա

զաղեղունս փշրեաց, զզէնս խորտա
կեաց, և զասպարս այրեաց հրով։
Անխեցէք և ծանիրուք՝ զի ես եմ ա՟ծ.
բարձր եղէց ՚ի հեթանոսս՝ և բարձ
րացայց ՚ի վ՟ր երկրի։ Տ՟ր զօրութեանց ը՟ն
մեզ. ընդունօղ է մեր ա՟ծ յակոբայ։
Ա՟ծ՝ յօգնել ինձ նայեաց. և տ՟ր յըն
կերել՝ ինձ փութա։ Ամաչեսցեն և
յամօթ լիցին որք խնդրեն զանձն իմ
դարձցին յետս և ամաչեսցեն որք խոր
հէին ինձ չար։ Դարձցին առ ժամայն
ամաչեցեալք՝ որք ասէին ինձ վաշ վաշ։
Ցնծասցեն և ուրախ լիցին ՚ի քեզ
ա՟մքն՝ որք խնդրեն զքեզ տ՟ր։
Ասասցեն յա՟մ ժամ, մեծ է ա՟ծ. որք
սիրեն զփրկութի՟ն քո։ Ես աղքատ և
տնանկ եմ ա՟ծ օգնեա ինձ. օգնական
և փրկիչ իմ ես դու տ՟ր իմ, մի՛ յամե
նար։ Տ՟ր զօրութ՟ն ծառայի քո.
կեցո զորդի աղախնոյ քո. և արա ա
ռիս նշան բարութեան։ Տեսցեն ա
տեալք իմ և ամաչեսցեն. զի դու տ՟ր
օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս։

Փառք հօր և որդւոյ և՛։

## Ղուկ։

Ճանապարհ ամենասուրբ և ճշմարտ
ութիւն և կեանք Քրիստոս
տէր. առաջնորդեա հոգւոց
մերոց՝ յերկրէ ելանել յերկինս։
Դուռն. ամենայն կենաց
մտից Յիսուս. մուծ
և ընդ մեզ առ Հայր քո՝ և Հոգի.
երգել միշտ ընդ փառս։

## Յորդորակ։

Ճանապարհ բարի Քրիստոս և ճշ
մարտութիւն. առաջնորդ հոգւոց
մերոց յերկրէ 'ի յերկինս։
Դուռն կենաց մտից Յիսուս Քրիստոս
ճշմարիտ. մուծ և ընդ մեզ առ Հայ
ընդ քո. Հոգւովդ սրբով։

## Մաղթանք։

Տէր՝ ուղղեա զգնացս մեր 'ի ճանապարհս
խաղաղութեան։ Տէր՝ ուղղեա և առաջ
նորդեա հոգւոց մերոց և ամենայն հաւա
տացելոց գնալ յարդարութեան ճանա
պարհն և 'ի կեանսն յաւիտենից։

 Ողո

Աղաչեսցուք զամենակալն աստուած՝ զի յաջողեալ ուղղեսցէ ըզճանապարհս ծառայից իւրոց 'ի բարի և 'ի խաղաղութի։ Ամենակալ տէր"։ երգ

Առաջնորդ կենաց և պարգևիչ խաղաղութեան քրիստոս աստուած մեր. առաջնորդեա մեզ գնալ 'ի ճանապարհս քո արդարութեամբ. և խաղաղութեամբ ժամանել 'ի նաւահանգիստն կենաց և փրկութեան՝ շնորհօք ողորմութեան քոյ։ զի դու ես օգնական և փրկիչ մեր. և քեզ վայել"։ աղ

Աղօթք պահոց. յորս ասեն ո՛կ. Նէ.

Օրհնեալ ես տէր աստուած փրկիչ մեր՝ որ յամենայն ժամ ընդ մեզ ես. և ոչ երբէք թողուս 'ի ձեռանէ քումմէ զայնոսիկ որք հաւատով և ճշմարտութեամբ կարդան առ քեզ։ Աղաչեմք և խնդրեմք 'ի քէն տէր՝ ճանապարհորդակից լեր ծառայից քոց քոյին վերակացութեամբ՝ պահելով 'ի խաղաղութեան. և առաջնորդեա մեզ միւսանգամ խաղաղութեամբ և խնդութեամբ հասանել յիւրաքանչիւր բնակութիւնս 'ի քրիստոս յիսուս 'ի տէր մեր։ Որում վայել է"։

Օրհնեալ տէր մեր յիսուս քրիստոս. ամէն։

Հայր մեր որ յերկինս ես"։



Դ,ան խոստացեալ Հոգին սբ առաքեցեալ.
և զառաքեալսն՝ի վերնատան շնորհօք լցեալ.

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Երրորդ ժամուն։ Որ կատարի ՚ի դէմս իջման Հոգւոյն սրբոյ։ Նա՛և ՚ի դէմս Նախամօրն ճաշակման և աշխատութեան Որդւոյ։

# ՕՐՀՆԵԱԼ ՀՈԳԻԴ

## սուրբ Աստուած ճշմարիտ․ ամէն։

### Սաղմոս․ 50։

Ողորմեա ինձ Աստուած՝ ըստ մեծի ողորմութեան քում․ ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ։
Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ․ և ՚ի մեղաց իմոց սուրբ արա զիս։
Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ․ և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։



Քեզ

Քեզ միայն մեղայ տէր. և զչար ա-
ռաջի քո արարի:
Որպէս արդար եղիցիս ՚ի բանս քո. և
յաղթեսցես ՚ի դատելն քո:
Անօրէնութեամբ յղացայ, և ՚ի մեղս
ծնաւ զիս մայր իմ:
Դու տէր՝ զճշմարտութիւն սիրեցեր.
զանյայտս, և զծածկեալս՝ իմաստութեամբ
քով յայտնեցեր ինձ:
Ցօղեսցես յիս մշտկաւ և սուրբ եղէց.
լուասցես և քան զձիւն սպիտակ եղէց:
Լսելի՛ արա ինձ տէր զցնծութիւն և
զուրախութիւն. և ցնծասցեն ոսկերք
իմ տառապեալք:
Դարձո՛ զերեսս քո ՚ի մեղաց իմոց. և
զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն:
Սիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած. և զհո-
գի ուղիղ նորոգեա ՚ի փորի իմում:
Մի՛ ընկենուր զիս տէր յերեսաց քոց.
և զհոգի քո սուրբ՝ մի՛ հաներ յինէն:
Տուր ինձ ցնծութիւն փրկութեան. և հո-
գւով պետութեան քո հաստատեա զիս:
Ուսուցից անօրինաց զճանապարհս
քո. և ամբարիշտք առ քեզ դարձցին:


Փրր

Փրկեա՛ զիս յարենէ Ած՝ Ած փրկու-
թեան իմոյ. ցնծասցէ լեզու իմ
յարդարութեան քում։

Տր՝ եթէ զշրթունս իմ բանաս, բե-
րան իմ երգեսցէ զօրհնութիս քո։

Թէ կամեցեալ էիր, պատարագս մա-
տուցանէաք. բայց դու ընդ ողջա-
կէզս իսկ ոչ հաճեցար։

Պատարագ Այ՝ հոգի խոնարհ. ըզ
սիրտ սուրբ՝ և զհոգի խոնարհ,
Ած ոչ արհամարհէ։

Բարի՛ արա Տր կամօք քովք սիոնի.
և շինեսցին պարիսպքն Եմի։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատրգս
արդարութե, յորժամ ուխտից պտրգս
հանցեն ՚ի սեղան քեզ զուարակս։

Փառք հօր և որ"։

Նոյն երրորդի ժամու աւուրն՝ շինէ Սուր-
բացին.

Օրհնեմք ըզ քեզ Հայր անս-
կիզբն՝ էից էակ ՚ի յանգոյից.
բարձեր ձեռօք նիւթ ՚ի հողոյ՝ և ըս
տեղծեր մարդ ՚ի պատկեր քո. զը
լուխն ոտից խոնարհեցաւ՝ զի զպատ



ճի

Հերան քո մուսայա՛՝. դարձեալ ա-
սեմք ըստ անառակին՝ Թէ հայր մե-
ղայ քեզ 'ի յերկի՛նս։

Խորհնաւորացն անքըննելի՝ Եղեր
մարդկան տեսանելի՝. զգեցար պատ-
կեր հողեղինի՝ Պատկերըդ հօր ան-
փոխելի՝. ելեր յերրորդ ժամ 'ի խա-
չին՝ վասն ադամայ նախաստեղծին՝.
ընդ աւազակին քում խաչակցին՝ որ
ժամանցո ըզմեզ դրախտի՛ն։

Թագաւո՛ր Թագաւորաց՝ առատա-
բաշխ Հոգի շնորհաց՝. ժողովե-
լոցն 'ի վերնատանն՝ առաքելոցն եր-
կոտասանն՝. 'ի հրոյ լեզուս երեւեցար՝
յոգիս նոցա վերանստար՝. լո՛ւր յա-
նուն քո ժողովելոցս՝ էջ եւ առ մեզ
յերրորդ ժամո՛ւս։

Սաղմոս։

Յամ ժամու աղաչանք իմոյ են. 'ի մեղ-
ւաց իմոց տէր արա զիս տէր. եւ յօտարէն
պահեա զծառայս քո մարդասէր տէր։
Եւ եւս խաղաղութեան զտէր աղաչես-
ցուք՝ ընկա՛լ կեցո եւ ողորմեա։
Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որ՛։
Բա

Քարոզ Ե.Ծ. պահոցն ՚ի Յովհաննու Մանդակունւոյ ասացեալ։

Միաբան ամենեքեան գոհասցուք զմարդասիրէն ա՟յ և զփրկչէն մերմէ յ՟սէ ք՟սէ. որ ազատեաց զազգս մարդկան ՚ի դառնապարտութենէ անիծիցն. և եբարձ զմեղս աշխարհի ՚ի ժամուս յայսմիկ խաչիւն իւրով. և շնորհեաց առատապէս զպարգևս Հոգւոյն ս՟րբ երանելի առաքելոցն։ Խնդրեսցուք հաւատով զի զմեզ զամենեսեան՝ արասցէ հաղորդ մեծամեծաց և ա՟ծայնի բարեացն այնոցիկ. աղօթիւք և բարեխօսութ՟բ ամ՟ ս՟րբց. որք աստ և ընդ ամ՟ տիեզերս։ Որ՟պ զի անարատ վարուք և ճշմարիտ առաքինութ՟բ կացեալք ըստ կամաց Ն՟ր յայսմ աշխարհիս, զմասն և զվիճակ ժառանգութե՟ ընկալցուք ընդ ամ՟ ս՟րբս Ն՟ր. զընակութիւն յաւիտենական և երկնային խորանացն։ Զոր խոստացաւ սիրելեաց իւրոց Ճշմարիտն ա՟ծ յ՟ս ք՟ս տ՟ր մեր. կեցո՛ և ողորմեա՛։

 Զժամս

Օ՛ ժամս և զաւուրջեկայ օրս խաղաղ՛՛: Օ՛ հրեշտակ: Օ՛ քաւու: Օ՛ սրբյ: Էջ ևս մի: Օ՛ յանձինս: Ողորմեայց:

## Աղօթ:

Որ Նքրօբէակյան և յանպատուլ հանգուցել ես յաթոռ՝ և այցելու ես միշտ արարածոց քոց: Որ և՛ի ժամուս յայսմիկ հեղեր յերանելն առաքելոցն զշնորհս հոգւոյդ սրբոյ: Դու տէր՝ յաւուրջեկայ ժամուս և յաւէտ մինչև՛ի կենցաղոյս աւուրտուն՝ տպաւորեալ միացո զմեզ ընդ տմ բարեգործութե յորդորմունս. և խոստացելոց բարեացդ հաղորդս լինել զմեզ արժանի արա: Տր մեր և փրկիչ յս քս. որ ես օրհնեալ ընդ հօր և ընդ սրբ հոգւոյդ: այժմ և միշտ և՛՛:

## Խաղաղութեան Աղնէցան:

Որ էիր յառաջ քան զյաւիտեանս բանդ տծ. էակից հօր՝ և արարչակից սր հոգւոյդ: Որ և զնախաստեղծին պատուիրանազանցութիւն պտղոյն ճաշակման՝ նշանաւ ամենա



յաղթ

յաղթ խաչի քո 'ի ժամուս յայսմիկ
ենթադրեալ 'ի կենդանութիւն փո
խեցեր. և զանօրէնութիս մեր 'ի նմա
բևեռեալ՝ կեանք անապական և նո
րոգումն կենաց յուսացելոց 'ի քեզ
խոստացար։ Որոց մասնաւորիլ և ըզ
մեզ արժանի արա տր մեր յս քս.
որ ես օրհնեալ ընդ հօր և՛։

Տր ած օրհնեալ. օրհնեալ տր զօր
հանապազ։ Ած մեր ած կենարար
և նմա փրկեսցէ զմեզ։ Տր ած օրհ
նեալ. օրհնեալ տր զօրհանպզ. առաջ
նորդեսցէ մեզ ած փրկիչ մեր։

Քարոզ։

Խնդրեսցուք հաւատով 'ի տնէ վն
ճանապարհորդաց՝ հարց և եղբարց
մերոց. որք ընդ ծով և ընդ ցամաք
գնասցեն. ոպ զի առաջնորդեսցէ նց.
խաղաղութբ պահեսցէ և տարեալ հա
սուսցէ յիւրաքանչիւր տեղիս տր ած
մեր։ Ամ զի նա ինքն է առաջնորդ
կենաց և յոյս փրկութե. որ յաջողէ
ծառայից իւրոց խաղաղութբ հասանել
'ի նաւահանգիստ կենաց և փրկութե։
ամենա՛։



Տ. ողոր

## Աղօթք։

Առաջնորդեա՛ մեզ Տէր Աստուած մեր, և ուսո՛ մեզ գնալ ՚ի ճանապարհս քո արդարութեան. պահեա՛ ՚ի խաղաղութեան զկեանս մեր, և զգնացս ՚ի հաճոյս քո. ժամանեցո՛ զհոգևոր և զմարմնաւոր ընթացս ծառայից քոց անարատ ճանապարհաւդ յաւիտենականն ՚ի կեանսդ. Շնորհօք միածնի քոյ՝ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. որ եղև մեզ առաջնորդ կենաց և յոյս փրկութեան։ Ընդ որում օրհնեալ ես Հայր ամենակալ՝ հանդերձ կենդանարար և ազատիչ Սուրբ Հոգւովդ։ Այժմ և՛։

Երիցս Տէր ողորմեա՛։

Բարերար և բազումողորմ Աստուած։

---

## Սաղմոս 22։

Տէր հովուեսցէ զիս. և ինձ ինչ ոչ պակասեսցի։

՚Ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց զիս. և առ ջուրս հանգստեան սնոյց զիս

Դարձոյց զանձն իմ առ իս. և առաջ

նորոգեաց զինձ ՚ի ծառայութեան արդա-
րութեան վասն անուան իւրոյ:

Թէպէտ եւ գնացից ես ՚ի մէջ ստուե-
րաց մահու, ոչ երկեայց ՚ի չարէ.
զի դու Տէր ընդ իս ես:

Ցուպ քո եւ գաւազան, նոքա մխի-
թարեսցեն զիս:

Պատրաստ արարեր առաջի իմ զսե-
ղան. այն յանդիմանն նեղչաց իմոց:

Օծեր իւղով զգլուխ իմ. բաժակ քո
ուղ անապակ արբեցոյց զիս:

Ողորմութիւն քո Տէր զհետ իմ եկեսցէ
զամենայն աւուրս կենաց իմոց. բնակել
ինձ ՚ի տան Տեառն ընդ երկայն աւուրս:

Ցոյց ինձ ճանապարհ՝ յոր եւ գնացից.
զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

Փրկեա զիս ՚ի թշնամեաց իմոց Տէր.
զի զքեզ ապաւէն ինձ արարի.

Ուսո ինձ առնել զկամս քո՝ զի դու
ես Աստուած իմ: Հոգի քո բարի՝ առաջ-
նորդեսցէ ինձ ՚ի յերկիր ուղիղ:

Վասն անուան քո Տէր կեցուսցես զիս.
արդարութեամբ քով հանցես ՚ի նեղութէ
զանձն իմ:

Ողորմութ՟բ քով սատակեսցես զթշ-
նամիս իմ. և կորուսցես զա՟մ նեղիչս
անձին իմոյ՝ զի ես ծառայ քո եմ։
Փառք հօր և որ"։

Քարոզ։

Դու ես խաղաղութ՟ն զօր ամ"։

Գոհաբանելով աղաչեսցուք զբարե-
րար հօրն ա՟ծ, և խնդրեսցուք զողոր-
մութի ՚ի նմանէ. զի անցուսցէ ՚ի մէնջ
զցասումն պատուհասի յանցանաց մե-
րոց բարերարութ՟ն իւրով։ Ա՟մն"։

Աղօթք։

Խաղաղութ՟բ քով հոգւոյդ ս՟բ ա՟ծ ճշ-
մարիտ՝ որ ՚ի վեր է քան զա՟մ միտս
և զխորհուրդս, մխիթարեա զանձինս
ծառայից քոց՝ ը՟ունելով զաղաչանս
մեր։ Անցո ՚ի մէնջ զցասումն պա-
տուհասի յանցանաց մերոց բարերա-
րութ՟ քո։ Ներեա և լուր մեզ. քա-
ւեա և թող զմեղս մեր. արժանաւո-
րեա գոհութ՟ փառաւորել զքեզ ընդ հօր
և ընդ որդւոյն միածնի. այժմ և"։
Օրհնեալ տ՟ր մեր յ՟ս ք՟ս. ամէն։
Հայր մեր որ յերկինս ես"։


Սաղ

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից Ս. եկ
երրորդի ժամուն։ Սէ հարցէ՛ ի տէր Հայր մեր·
Հաշտ՝ ի տէր չարչարանաց եւ խաչելութեան
Սրբոյն էջ.

# ՕՐՀՆԵԱԼ ՀՈԳԻՆ սբ. Ած ճշմարիտ · ամէն.

Սաղմոս · 50.

Ողորմեա ինձ Ած՝ ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում ջնջեա զանօրէնութիւն իմ.

Երգ վեցերորդի ժամուն.

Խոնարհեցաւ լոյսն արևուն՝ ի վեցերորդ ժամ ու ընթացն՝ · Ծանուցեց Թէ լոյսն աստուածային՝ նուաճեցոյց զլոյսն եղական՝ · Կախեալն ընդ քեզ

մերկ 'ի խաչէն՝ քաղցր ստուերաւ ըն
ծածկեցին՝ · հերքեա՛ 'ի մէնջ ըզծու
լութիւն՝ շըրջօղ դիւէն միջօրէի։
Զանձրուն մտօք այսոյն չարի՝ որ
յայս ժամուս պատերազմի՝ · ղօղէլ
յոգւոց մեր հերքեսցի՝ քո նշանաւ
սրբոյ խաչին՝ · Ճշմարտութեն քո
ճառագայթ՝ զաւ 'ի յերկնից անկեալ
փայլակն՝ · մերժել 'ի մէնջ հալածեսս
ցէ՝ և զմեզ լուսով քով վառեսցէ։
Յայս միջօրեայ տուընջեան ժամուս՝
վայելչական աչաց մարմնոյս՝ · նետիւք
գաղտնեաց մի՛ խոցեսցուք՝ 'ի խաւարէն
որ 'ի ծածուկ՝ · շուրջանակի բանա
կեսցեն՝ ըզմեզ բանակք հրեշտա
կաց՝ · որք պարակից մեզ լինելով՝
ըզքեզ ընդ հօր փառաւորեսցեմք։

Սաղմոս։

Յամ ժամու աղաչանք իմ այս են"։
Լոյս և խաղաղութեն զտէր աղաչ"։
Օրհնութի և փառք Հօր և Որդւոյ
և Հոգւոյն սրբոյ։ Այժմ և՛"։


Ք

## Բարքուղ Դծ Պաւղոսին։

Սրբուն մօրք և անզբօս խորհըր
դով կացցուք միաբան յաղօթս ա
ռաջի տն մերոյ և փրկչին յս քի։
Հաւատով խընդրեսցուք ՚ի Նմանէ
զհրեշտակ խաղաղութե պահապան ան
ձանց մերոց. որ եկեալ բնակեսցէ
շուրջ զմեօք, և աներկիւղ պահեսցէ
զմեզ յամ հրեղէն նետից սատանայի որ
թռչի ՚ի տուէ. յերաց խաւարային
գնացից ՚ի գայթակղութենէ դիւին
՚ի հասարակ աւուր։ Յորմէ զգու
շութբ պահելով աղօթիւք և բարե
խօսութբ ամ սբց՝ շնորհեսցէ մեզ
մարդասէրն այծ կեալ աւազինութբ
՚ի փրկութի անձանց մերոց. ՚ի պատիւ
և ՚ի փառս կենդանացուցիչ անուան
իւրոյ։ Յոյս հաղորդութե ընկալ
ցուք ՚ի յայտնութե միածնի որդւոյն
այ. կերպարանակից առնել զմարմին
խոնարհութե մերոյ՝ ըստ Նմանութե
մարմնոյ փառաց իւրոց։ Սա զի զայս
խոստացաւ սիրելեաց իւրոց Ճշմա
րիտն այծ յս քս տր մեր. կեցո և ող։

Զժամս և զառաջիկայ օրս խաղ"։
Զհրեշտակ։ Զքաւութի։ Զմղ։
Եւ ևս միւս։ Զանձինս։ Ողորմեաց։

Աղօթք։

Զգեցո՛ մեզ տր ած մեր զէն արդարութե․ զօրաւոր և յաղթող լինել ընդդէմ այնյական պատերազմաց․ և զոմ հրեղէն նետս նր շիջուցանել՝ անկասկած լիցուք յերից խաւարային գնացից ՚ի գայթակղութէ դիւին ՚ի հասարակ աւուր։ Եւ զգաստացեալք փոյթեռանական տուընջեամբս՝ առաքինութբ կացցուք ՚ի փրկութի անձանց մերոց ՚ի պատիւ և ՚ի փառս տբյ Երրորդութեդ։ այժմ և"։

Խաղաղութեան Աղօթքն։

Երկնաւոր խաղաղութբ քով պարըսպեալ պահեա՛ զանձինս մեր տր զօրութեց։ Վս զի դու ես ած խաղաղութե․ և բաց ՚իքէն զա՛յլ ոք ո՛չ գիտեմք․ և զանուն քո ամենազօր՝ կարդամք յօգնականութի անձանց մերոց։ Նայեա՛ց յերկրպագութիս մեր և տո՛ւր մեզ առնել զարդարութի հրամար

 տու

տութեն։ Նա գոհութ փառաւորեսցուք զՀայր և զՈր"։

Աղօթս։

Տէ՛ր մի՛ յիշեր զմեղս մեր զառաջինս․ վաղվաղեսցէ առ մեզ ողորմութի քո՛ զի աղքատացաք յոյժ։ Օգնեա՛ մեզ ած փրկիչ մեր՝ վն փառաց անուան քոյ։ Տէ՛ր՝ փրկեա՛ զմեզ և քաւեա՛ զմեղս մեր վն անուան քոյ։

Քարոզ։

Ա՛ծ հիւանդաց և ամ վշտացելոց՝ աղաչեսցուք զփրկիչն մեր քս, զի ողորմեսցի ըստ մեծի ողորմութեն իւրում․ և բժշկեսցէ զախտս և զհիւանդութիս հոգւոց և մարմնոց ծառայից իւրոց․ և կատարել առողջութբ հասուսցէ զամն 'ի մշտնջենաւոր և յանախտ կեանս։ Որ առաքեցաւ 'ի հօրէ 'ի բժշկութի ազգի մարդկան՝ միածին որդին այ։ Տր մեր և փրկիչ յս քս․ կեցո՛ և ողորմեա՛։

Մաղթ։

Փարատեա՛ զցաւս և բժշկեա՛ զհիւանդութիս 'ի ժողովրդենէ քումմէ

 տր

տէր ա՟ծ մեր. և շնորհեա ամենեցուն զկատարեալ առողջութիւն նշանաւ ամենայաղթ խաչի քո. որով բարձեր զտկարութի՟ ազգի մարդկան, և դատապարտեցեր զթշնամին կենաց և փրկութեան մերոյ։ Դու ես կեանք մեր և փրկութի՟՝ բարերար և բազում ողորմ ա՟ծ. որ միայն կարող ես թողուլ զմեղս, և մերժել զախտս և զհիւանդութի՟ս ՚ի մէնջ. որում յայտնի են սեաք կարեաց մերոց։ Պարգևեսցէ բարեաց՝ պարգևեա զառատ ողորմութիւն քո՛ ՚ի վ՟ր արարածոց քոց՝ ըստ իւրաքանչիւր պիտոյից. յորոց հանապազ փառաւորեալ գովի ամենայն Երրորդութիւնդ։ Այժմ և միշտ և՛։

Օրհնեա՛ Տէր և ողորմեա՛։

Բարերար և բազում ողորմ ա՟ծ՛՛։

---

Առաքեալ։

Երանի՛ որ խորհի զաղքատն և զտնանկն. յաւուր չարի՝ փրկէ զնա տ՟ր։

Տր փրկէ զնա և կեցուցանէ․ երանե-
լի առնէ զնա ՚ի վր երկրի․ և ոչ մատ-
նէ զնա ՚ի ձեռս թշնամեաց իւրոց։
Տր օգնական է նմա ՚ի մահիճս ցաւոց
իւրոց․ զամ անկողինս նր դարձու-
ցանէ ՚ի հիւանդութենէ նր։
Ես ասացի տր ողորմեա ինձ․ բժշկ-
եա զանձն իմ, եւ մեղայ քեզ։
Որ բնակեալն է յօգնութի Բարձ-
րելոյն, ընդ հովանեաւ այ յերկինս
հանգիցէ։
Ասասցէ տն ընդունող իմ ես դու․
ապաւէն իմ այ՝ և ես յուսամ ՚ի նա։
Նա փրկեսցէ զքեզ յորոգայթէ որսո-
ղին, և ՚ի բանից ՚ի խռովութէ։
Ի թիկունս մէջս իւր ընկալցի զքեզ․
և ՚ի հովանի թևոց նր յուսասցիս։
Որպէս զզէն շուրջ եղիցի զքեզ ճշմար-
տութիւն նորա։
Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշե-
րի․ և ոչ ՚ի նետէ՝ որ թռչի ՚ի տուէ։
Յիրէ որ շրջի ՚ի խաւարի․ ՚ի գայթակ-
ղութէ դիւի ՚ի հասարակ աւուր։
Անկցին ՚ի կողմանէ քումմէ հազարք

 և

և բևրք ընդ աջմէ քումմէ • և առ քեզ ինչ ոչ մերձեսցին:

Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու • և զհատուցումն մեղաւորաց տեսցես • զի դու Տէր յոյս իմ ես:

Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն • ոչ հասցեն առ քեզ չարք • և տանջանք մի՛ մերձեսցին՚ի յարկս քո:

Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո • ՚ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քո:

Ի բազուկս իւրեանց ընկալցին ըզքեզ՝ զի մի՛ երբէք հարցես զքարի զոտն քո:

Ի վերայ իժից և քարբից գնասցես դու • և առ ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն:

Քանզի յիս յուսացաւ և փրկեցից զնա • հովանի եղէց նմա՝ զի ծանեաւ զանուն իմ:

Կարդասցէ առ իս և ես լուայց նմա և առ նմա եղէց ՚ի նեղութեան:

Փրկեցից և փառաւոր արարից զնա • երկայն աւուրբք լցուցից և ցուցից նմա զփրկութիւն իմ:

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն ս՟բյ։ Այժմ և՛։

Քարոզ։

Դու ես խաղաղութ՟ն զ՟ր տ՟ր՛։

Խնդրեսցուք հաւատով 'ի Հօրէ վասն քաւութ՟ն մեղաց և թողութ՟ն յանցանաց. փրկելոյ զմեզ 'ի վշտաց և 'ի նեղութ՟եց. խնամելոյ 'ի վ՟ր մեր ողորմութ՟ն և գթութ՟ն տ՟ն ա՟յ ամենակալին. կեցո՛ և ողորմեա՛։

Աղօթք։

Հայր գթութեանց և Ա՟ծ ա՟մ մխիթարութ՟եց. որ մխիթարես զմեզ յա՟մ նեղութեան մերում. լո՛ւր և այժմ ձայնի պաղատանաց ծառայից քոց՝ ընդունելով զաղաչանս մեր։

Անցո՛ 'ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութ՟բ քով։ Ներեա՛ և լո՛ւր մեզ. քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր. արժանաւորեա՛ գոհութ՟բ փառաւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ ս՟բ հոգւոյդ։ այժմ և միշտ՛։

Օրհնեալ տ՟ր մեր յ՟ս ք՟ս. ամէն։

Հայր մեր որ յերկինս ես՛։

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից իննե րորդի ժամուն։ Որ ջափարի ՚ի դէմս Որդւոյն ածյ․ ՚ի Հոյլ և մահուան և բաժանման հոգւոյն աստուածմանն։

# ՕՐՀՆԵԱԼ ՈՐԴԻԴ ոք Ած ճշմարիտ · ամէն։

Սաղմոս · 50։

Ողորմեա՛ ինձ ած՝ ըստ մեծի ողոր մութեան քում· ըստ բազում գթութե քում քաւեա՛ զանօրէնութիս իմ։

Երգ իններորդի ժամուն։

Զչարչարանացն քեզ տէր լուսոյ՝ երրորդ ժամու խաչելոյ՝ պաշտա ւացեալ յիններորդին՝ ՚ի տիպ ըմման

մա

մահու ստուերին. Ջահըդ լուսոյ մե-
ծապայծառ՝ աւանդեցեր զհոգեդ
առ Հայր. ուստի՛ կցորդ քեզ ՚ի յեր-
կինս՝ ըզմեզ ուղղեա՛ հոգւով քոյին։
Անդ արարածք տրք սարսեցին՝ զկապէլ
հոգւոյն արձակեցին. վէմք ՚ի վիմեդ-
պատառեցան՝ ՚ի տապանաց մեռեալք
յարեան. տարերք երկրի տատանէին՝
և աշխարհի սիւնք դողային. ըս-
մեռեալս առ քեզ պաղատիցուք՝ զի
ընդ արդարսն դասիցուք։
Ցուցեր յայնժամ ըսքանչելիս՝ և
այժըմ մեզ ողորմեսցիս. ախտեալ
բնութիւն քեւ ողջացաւ՝ շնորհեա և
մեզ լինիլ անցաւ. փոխան մահու քո
կենարար՝ կեցո՛ ըզմեզ տէր բարերար.
քեզ պաղատիմք ըստ աւազակին՝ յի-
շեա՛ ըզմեզ յօրն ահագին։
Յամ ժամու աղաչանք իմ այս են"։
Նա ես խաղաղութեան զտէր աղ"։
Օրհնութիւն և փառք Հօր և որ"։
Քարոզ ԴԺ Պահոցն։
Սուրբ սրտիւ և հաստատուն հա-



ւա

ւատով՝ կայցուք միաբան յաղօթս
առաջի տն մերոյ և փրկչին յի քի։
Յիշելով զմեծամեծս նորա զանչափ
շնորհս ․ զհամբերութի կենսատու-
խաչին , և զհեղումն ազատեցուցիչ
արեան նորա ․ և զոյցին նմանս՝ որ
յայսմ ժամու վն մեր մեղաւորացս
կրեաց նա։ Եւ մեք զայս ամ զմտաւ-
ածելով՝ սրբեսցուք ՚ի մեղաց զխոր
հուրդս զբանս և զգործս մեր ․ կա
տարեսցուք ըզ սրբութիւն անձանց
մերոց ահիւն այ։ Մի՛ յապաղեսցուք
խոստովան լինիլ նմա զմեղս մեր և
խնդրել զթողութի մեղաց մերոց ․
զի մի՛ կորիցուք անապաշխար՝ զյաւի
տենական կորուստն։ Այլ մինչդեռ
ժամանակս ՚ի ձեռս է , գործեսցուք
զբարիս ՚ի կեանս յայսմիկ ․ օրինակ
վարուց մերոց ունելով զամ սբս և
զյաղթօղ նահատակսն ․ որք միանգամ
՚ի սկզբանէ հաճոյ եղեն տն և փրկ
չին բոլորեցունց։ Որոց աղօթիւք
և բարեխօսութբն՝ շնորհեսցէ մեզ
մարդասէրն ած ըզ հաճոյսն իւր և

 զօ

զօգուտն մեր խորհիլ միշտ և առնել.
և անպատում պարգևացն հաղորդս
գտանիլ: Որ խոստացար սիրելեաց
իւրոց ճշմարիտն ած՝ յս քս տր մեր.
կեցո՛ և ողորմեա՛:

Զ ժամս և զառաջիկայ օրս խաղ":
Զ Հրեշտակ: Զ քաւու: Զ սբյ:
Լու Լեսմ: Զ անձինս: Ողորմեաց.

Լ.շին:

Տր զօրութեց՝ որ կամաւոր մահուամբ
քով ՚ի ժամուս յայսմիկ կենդանացու
ցեր զմեզ ՚ի մեռելութէ մեղաց մերոց.
և բժշկեցեր զհիւանդ դատապարտութե
մերոյ ՚ի խաչին. և շնորհեցեր ազա
տութի ազգի մարդկան ՚ի ծառայութէ
ապականութե. թէ յազատութի փառաց՝
հեղմամբ արեան քոյ սբյ: Ընկալ և
այժմ զաղաչանս մեր. և յաջողեա մեզ՝
ուղիղ հաւատով և առաքինաւեր վա
րուք կեալ յայսմ աշխարհիս. և առ
ժամանակ լինել յաւիտենական երկ
նայինն ուրախութեցն ընդ ամ սրբս քո:
Նու գոհանալով փառաւորել զքեզ
ընդ հօր և սբյ հոգւոյդ. այժմ և":



Լյա

## Խաղաղութեան Մաղթանս:

Բազումողորմ Աստուած և հաստիչ խա-
ղաղութեան . հաստատեա զանձինս մեր
քոյով խաղաղութեամբ . որով ունիս յիւրա-
քանչիւր կարգի զամենայն արարածս քո .
ուղիղ հրամանաւդ մատակարարելով:
Վասն զի այդ խնդրէ կամք քո՛ խաղա-
ղական և հոգևոր սիրով կալ մեզ առ-
միմեանս . և այսպէս արթուն մտօք
յայտնութեան միածնիդ Տեառն և փրկչիդ
մերոյ Յիսուսի Քրիստոսի: Որում արժանաւորք
եղիցուք հանդիպիլ ամպովք ընդ ա-
ռաջ Տեառն յօդս . զուարթերես կաց-
ցուք յաջմէ քումմէ ընդ սրբս և ընդ
սիրելիս անուանդ քո սրբոյ . և ժա-
ռանգեսցուք զպատրաստեալն ՚ի սկզ-
բանէ Հօր սրբոց քոց զարքայութիւնդ:
Եւ ընդ նոսին գոհանալով փառա-
ւորեսցուք զքեզ ընդ հօր և ամե-
նասուրբ հոգւոյդ: Այժմ":

### Սաղմոս:

Տէր մի՛ մատներ զմեզ իսպառ վասն
անուանդ քում սրբոյ . մի՛ ցրեր
զուխտս քո . և մի՛ ՚ի բացեայ առներ

զողորմութիւն քո 'ի մէնջ։
Վասն աբրահամու սիրելւոյ քո․
իսահակայ ծառայի՝ և իէլի սբյ քո։
Տր մի՛ մատներ զմեզ իսպառ վասն
անուան քո սբյ․ մի՛ ցրեր զուխտս քո․
և մի՛ 'ի բացեայ առներ զողորմու-
թիւնս քո 'ի մէնջ։

Նշէ Տեառն Ներսէսէ։

Նահապետին աբրահամու՝ հայցմամբն
ընկալ տէր զաղաչանս։ Եւ ծա-
ռայի քում սահակայ՝ խնդրուա-
ծովքն 'ի մեզ գթա։ Յեռատեսին իս
րայէլի։ Սիրով սրբոյն 'ի մեզ խնայ-
եա։ Երեքսրբեան երիւք սոցին։
Արարեալ զհոգի զմիտս և զմարմին։

Քարոզ։

Աղաչեսցուք զկենսատու փրկիչն
մեր քս՝ որ կամաւոր խաչելու թն
իւրով զարարածս փրկեաց․ և հեղ-
մամբ արեան իւրոյ՝ զթողութի շնոր-
հեսցէ յուսացելոց իւրոց․ ամէն։

Աղօթք։

Անկեալ առաջի քո բարերար և բա-
ղում ողորմած՝ աղաչեմք ամենայն

սրտիւք մերովք և խնդրեմք զգթու-
թի ’ի քէն. ով խոստացար ծառայից
քոց և տայցեր՝ զամ զոր ինչ խնդրի-
ցեք հաւատով յանուն Որդւոյ ’ի
Հօրէ , տացի՛ ձեզ: Շնորհեա՛ և
այժմ հաւատացելոցս ’ի քեզ՝ և կա-
տարեա՛ ’ի բարի զխնդրուածս մեր.
զի ’ի քեզ եմք ապաւինեալ: Եւ քո
առատ ողորմութեդ մխիթարեա՛ ըզ
մեզ ’ի կեանս այսմիկ . և առաջնոր-
դեալ հասո՛ յանձաւ երկնից արքայ-
ութեդ . ’ի փառաբանութի և ’ի պատիւ
ամենատուր Երրորդութեդ: այժմ և՛՛:

Յիշեա՛ Տէր և ողորմեա՛:

Բարերար և բազումողորմ ած՛՛:

---

Սաղմոս , 114:

Սիրեցի՝ զի լուիցէ տր զձայն ա-
ղօթից իմոց . զի խոնարհեցոյց
զունկն իւր առիս . և ես յաւուրս
իմ կարդացի առ նա:
Շրջեցան զինև երկունք մահու .
և վիշտք դժոխոց գտին զիս:
Զնեղութիւն և զանձկութի գտի .
և

և զանուն տեառն կարդացի։

Ո՛ Տ̃ր փրկեա՛ զանձն իմ. ողորմած
ա̃ծ մեր՝ ողորմի և պահէ զտղայս Տ̃ր։

Ես խոնարհ եղէ՝ և Տ̃ր կեցոյց զիս.
Դարձ անձն իմ ՚ի հանգիստ քո՝ զի
Տ̃ր օգնեաց քեզ։

Փրկեաց զանձն իմ ՚ի մահուանէ.
զաչս իմ յարտասուաց. և զոտս իմ
՚ի գայթակղութենէ. հաճոյ եղէց առա-
ջի Տ̃ն յերկրին կենդանեաց։

Հաւատացի զոր և խօսեցայ. և ես
խոնարհ եղէ յոյժ։

Ես ասացի ՚ի զարմանալ իմում, թէ
ա̃մ մարդ սուտ է։

Զինչ տաց արիտուր Տ̃ն ընդ ա̃մի՝
զոր և ետ ինձ.

Բաժակ փրկութեան ընկալայց. և
զանուն Տ̃ն կարդացից։

Զուխտս իմ Տ̃ն տաց՝ առաջի ա̃մ
ժողովրդեան նորա։

Պատուական է առաջի Տ̃ն մահ սրբ-
ոց իւրոց. ո՛ Տ̃ր ես ծառայ քո եմ.
ծառայ և որդի աղախնոյ քո։

Հատեր զկապանս իմ. քեզ մատուցից


պատ

պատարագս օրհնութե՟ . և զանուն
տ՟ն կարդացից:

Ուխտս իմ տ՟ն տաց՝ առաջի ա՟մ
ժողովրդեան ն՟ր . 'ի գաւիթս տան
տ՟ն , և 'ի մէջ քո երուսաղէմ:

Օրհնեցէք զտ՟ր ա՟մ ազգք . գովե-
ցէք զնա ա՟մ ժողովուրդք:

Զօրացաւ ողորմու՟թի ն՟ր 'ի վ՟ր մեր .
և ճշմարտու՟թի տ՟ն մնացէ յաւ՟տն:

Փառք հօր և որ"։

---

## Շարական Տէրունեաց և Մարտիրոսաց:

ա՟ծ Որ ստեղծմամբ ըստ պատկերի քո
տ՟ր պատուեցեր զմեզ . ընկալ
և այժմ զննջեցելսն 'ի քեզ ուղիղ
հաւատով . ըստ մեծի քում ողորմութե՟:

Որ շնորհօք տ՟ր հոգւոյդ լուսաւո-
րեցեր . յիշատակի իւրեանց զհո-
գիս ն՟ց ընկալ մարդասէր . ըստ մեզ:

Որք հաղորդեցին մարմնոյ և արեան
քո տ՟ր . հանգո զհոգիս նոցա ընդ-
սրբս քո ք՟ս ա՟ծ . քանզի գթեք տ՟ր
ա

տրեա՛ն քո են։ Միա՛յն օրհնեալդ
'ի կանանց մայր և մի՛շտ կոյս և խնա
նալէ՛ լո՛յս • ծընօղ արարչին մերոյ
անդադար բարեբանեսցուք։
Արարչին տ̄րծ և ստեղծչին ազգի ակ
մարդկային • մի՛ անտես առներ ըզ
ննջեցեալսըն մեր՝ • այլ հանգո՛ զհո-
գիս նց ընդ սուրբըս քո։ Որդի՛դ
մի՛ածին յարութի տիեզերաց •
մի՛ անտես առ։ Հոգի՛դ ճշմարիտ
մխիթարիչ սըգաւորաց • մի՛ ան։
Հոգւոյն ըզ քե հովանացեալ միայն
սըրբուհի • ծընար ըզ բանն ա̄ծ
զանձանելույ հօր ծընունդ • և յայտ
նեցուր միութի երրորդութե՛։
Որ կոչեցեր առաքեղ տ̄ր ըզ տի- բա
զերս տ̄մ • ընկալ ըզմեր ըզննջեցեալն
'ի գիրկ նահապետին աբրահամու՝ •
ողորմած տ̄ր փրկիչ և բարերար։
Որ թողուցես տըրօղ տ̄րծ • թող


ըզ

ըզ մեղըս մեր ննջեցելոցն՝ · կարօղ
յամն և հզօր՝ · ողորմ։ Որ լուսա
տու ես տիեզերաց քս̃ ած̃՝ · լուսա
ւորեա և ըզմեր ըզննջեցեալսն լու-
սովլ երանաւէտ զըն̂արթնոցն՝ · ողոր։
Յոյս մեր և ապաւէն մայր տն̃ և
կոյս սր̃բ՝ · որ հուր ած̃ութեն ոչ բոցա
կիզեցոց զ.քո սր̃բ զորովայնդ՝ · բարեխօ
սեա առ տր̃ վասն մերոյ փրկութե́ան։
բկ Որ որդիդ ես և բանդ աստուած·
հաւասարակից ընդ հօր յէութե·
առ քեզ կարդամք մարդասէր՝ · հան
գո զհոգիս ննջեցելոյ մեր ընդ
սր̃բս քո։ Որ իջեր յերկնից վասն
մեր · զառաջինն աւեր զյանցանսն
ադամայ՝ · մերով բնութբ բարձեր
'ի վր̃ խաչին անարատ ձեռօք՝ · հան։
Որ լուծեր զիշխանութիւն մահու-
կամաւորական մահուամբ քո .ք. ո̃·
բանտաւորաց զարձակեցին առաջի քո


հե

հեղեալ մաղթեմք՝ · հանի։ Տիրուհի
անարատ մայր տ՜ն. և կոյս մարիամ.
քրոբէական աթոռ ընդ քեզ տեսաք
'ի յերկրի՝ · բարեխօսեա՛ առ տ՜ր վա
ս՜ն մերոյ փրկութեան։

Հա՛յր բարեգութ՝ որ գթացար 'ի յազգս որդւոց մարդկան՝ · առաքեցեր ըզ միածինդ 'ի փրկութիւն՝ · յիշեա՛ զհոգիս ննջեցելոց մերոց և հանգո՛ ընդ սուրբըս քո։ Որդի՛դ միածի՛ն որ յարեար 'ի մեռելոց՝ · 'ի միւսանգամ գալըստեանըն քո յարութի՜ մեզ խոստացար՝ · յիշեա։ Հոգի՛դ ճըշմարիտ՝ մըխիթարիչ սըգաւորաց՝ · աղաչանօք ս՜բ ա՜ծածնին և ա՜մ քոց ս՜րց՝ · յիշեա։ 'Ի բարեխօսու՜թ [illegible]ութացի՛ր մեզ ս՜բ ա՜ծածնին · առ 'ի փրկել ըզ ժողովուրդս 'ի մեղա՛ց և յապականութենէ։ գձ

Յանըսկըզբնակա՛ն ծոցոյ հօր խո- գկ
նար

Նարհեալ բանըդ մարմնացար՝ ի կու-
սէն վասըն փրկութե՛ մերոյ՝ · աղա-
չեմք զքեզ՝ զննջեցելոցն մեր ի քեզ
ուղիղ հաւատով · յիշեա՛ տէ՛ր
յորժամ գաս թագաւորութեամբ քո։
Անոխակալ քաղցրութե՛ որդի այ՝ ·
համբերեցար բառնալ ըզ մեղս ... քո
խաչելութեամբն · աղ։ Կամաւորական
մահուամբ քո լուծեր զերկունս
մահու՝ · և արժանի արարեր թողութե՛
յանցանաց քաւիչ քո արեամբ · աղ։
Որ փոխանակ մեղաւորաց ըզ մեռա-
նիլ յանձն առեր՝ · լիշատակ[?] ի գժո-
խոյ փըրկեցեր ի մեղաւոր[?] բան-
տէն ըզ գերեալսն · աղ։ Բարեբա-
նեմք զանչափ քո զմարդասիրութիւն՝ ·
որ երեքօրեայ յարուցեալ ըզ[?] ...
նութիւն պարգևեցեր ողջաւոցն[?] ·
աղ։ Մարմնոյ և արեան ծ կցոյ[?] յետ
ծնընդեան՝ · որ մարմնով ծնար


զոր

զարմանալօղն ՚ի կենալից մահու՝ բարե
խօսն լեր վ(ասն) անձանց մերոց՝ փրկել
՚ի սպառնալեաց գեհենոյն։

Յորժամ հարկանի փող գալըս- դ.
տեան քո տէր. յայնժամ զարհու-
րեալ դողան արարածք ՚ի յահէ
քումմէ. աղաչեմք ըզ քեզ փրկիչ.
հանգո և ըզ մեր ըզ ննջեցեալսն
ընդ սուրբս քո. որ միայն ես
բարերարն ողորմ։ Յահաբեկ լուսոյ
ծագման քո տէր. ցնծան դասք ան-
ուշքննեացն ՚ի վերնոյ լուսեղէն ամ-
պոյն. աղաչեմք ըզք։ Անոխակալ
բազմագութ ողորմած տէր. մի ան-
տես առներ ըզ մեղուցեալքըս յան-
հագին աւուրն. որ մի։ Որ էջեր
՚ի յերկնից և մարմնացար ՚ի սուրբ կու-
սէն. անձառելի քոյին ծնընդեամբ.
և զմեզ մի՛ անտես առներ՝ այլ փրկեա՛
պատուական և սուրբ խաչիւ քո։

 Որ

դկ Որ թագաւո՛րդ ես յաւիտենից
քս՛ ա՛ծ․ ընկա՛լ ը՛զ ծառայս քո՛ ի
բարի․ Եւ շնորհեա՛ ի յիշատակողացն
քում դասն։ Որ ունիս իշխանութի
մահու և կենաց․ հանգո՛ զհոգիս քոց
ծառայից․ Եւ։ Յորժամ կարգի
աթոռ տէրութեանդ քո․ և հաստատի
ատեան դատաստանին․ յայնժամ խը
նայեա ի ծառայս քո․ Եւ շն։
Ամենօրհնեալ ածամայր մարիամ․
քերովբէական աթոռ արարչին մերոյ
ընծօրէնութեամբն․ զոր երանեցին
ամ ազինք հանապազ։

մղ Հոգւոյն հանգուցելոց․ քս ած՝ արա
հանգիստ և ողորմեա․ և մեզ մեղաւո
րացս՝ շնորհեա զթողութի յանցանաց։
Եւ ես խաղաղութե զերգ ա։

ժբղ Ա հանգուցեալ հոգւոյն աղաչես
ցուք զերկրպագն մեր․ քս՝ զի զնս ըե ար
դարոց դատեսցէ․ և զմեզ կեցուսցէ
շնորհիւ ողորմութե իւրոյ․ ամենա։
Տէր ողորմեա՝ երեք։

## Աղօթք։

Քս̃ որդի այ̃ անոխակալ և բարե-գութ․ գթա՛ քո արարչական սիրովդ ՚ի հոգիս հանգուցելոց ծառայից քոց։ Յիշեա՛ յաւուր մեծի գալըստեան արքայութեան քո։ Որ՛ում արժանի ո-ղորմութեան՝ քաւութեան և թողութեան մեղաց։ Պատուարեալ պայծառացո՛ ընդ սրբս քո յաջակողման դասուն։ Զի դու ես տր̃ և արարիչ ամենայն․ դատաւոր կենդանեաց և մեռելոց։ Եւ քեզ վայել է փառք իշխանութիւն և պատիւ։ Այժմ և"։

Օրհնեալ տր̃ մեր"։ Հայր մեր որ"։

## Մաղթանք։

Զսաղմոս երգութիւնս և զաղաչանս՝ ընկալցի՛ մարդասէրն Ած̃ ՚ի հաճոյս բարերար կամաց իւրոց․ մեր մեղաց և յանցանացն թողութիւն շնորհեսցէ։ ՚ի չարէց փրկեսցէ․ ՚ի մեղաց պահեսցէ․ և նմա փառք յաւիտեանս ամէն։

Օրհնեալ թագաւորութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ․ այժմ"։



Յաւ

Ժամամուտ բոլոր չորեքին աւուրց պահոց. և
Տօնից Տէրունականաց. և այլ Սրբոց:



պահ Որ ՚ի հօրէ առաքեցար Փրկիչ և մարմնացար ՚ի սր̃յ կուսէն. որ վ̃ն մեր ՚ի յերկնից իջեր և լուսաւորեցեր զաշխարհս:

Բղ Գղ Եղ Ո՜ խաղաղութի քո տուր մեզ տ̃ր՝ որ խաղաղութ̃ց ես թագաւոր. զխաղաղութի և զողորմութիւն՝ որ յա̃մ ես դու կարող մարդասէր:

Դղ Որ ըստ ա̃մ զմիտս անցանես, զխաղաղութի քո ա̃ծ տուր մեզ հանապազ՝ զքեզ աղաչեմք:

Ներ Միածին որդի և բանդ ա̃ծ և անմահ էութի, որ յանձն առեր մարմնանալ ՚ի սրբուհւոյ ա̃ծածնէն և ՚ի մշ̃տ կուսէն. անփոփոխելի մարդ եղ̃լ խաչեցար քս̃ ա̃ծ մեր. մահուամբ զմահ կործանեցեր. միանգ ՚ի սր̃յ երրորդութենէն փառաւորակից ընդ հօր և սր̃յ հոգւոյն, կեցո զմեզ:

Ծնն Միածին անհասանելի՝ զբանն անըմկնելի, ... և ... անխառնաբար ծնար. զամենայնարարն ՚ի գիրկս քո

բարձեր․ Նորին անդադար բարեխօ
սեամ վն անձանց մերոց։

Ածածին զքեզ խոստովանել երկիր պագէ եկեղեցի ուղղափառաց․ քանզի՝ ուր քերովբէքն բազմաչեայք և աթոռք հրամնխութք և վեցթևեան սերոբէքն նայել ոչ իշխէին, կրեցեր անսերմնապէս զանապականութիւն ՚ի յարգանդի քում ով աղախին զտր․ և ծընար ով զմարդ զածն բոլորից զմարմնացեալն առ ՚ի քէն զանձառ զբանն ՚ի փրկութի աշի և կենաց անձանց մերոց։ ծնն

Աղաչեմք զքեզ սբ կոյս Մարիամ ծնն
Ածածին՝ բարձրելոյն զօրութեն հովանաւորել և սբ հոգոյն եկաւորութեն լուսաւորել․ որ զմդ գոյութեց անեղծինն յղացել ծնար անճառապս․ մարմնացելոյն առ ՚ի քէն բարեխօսեամ կեցուցանել զանձինս մեր։

Ծերունին այսօր Սիմէոն՝ հոգովն գայր ՚ի տաճարն՝ երևելով քերովբէիցն վեհագոյն․ զի որոց թևօքն սաւառնել ոչ իշխէին նայել ՚ի յահեղ փառսն, սա ՚ի գիրկս իւր բարձել համբուրէր տն ընդ առաջ

Համարձակապէս և գգուէր ով զմա
նուկն. և աղերսելով հայցէր արձակիլ
՚ի խաղաղութիւն։

Թն. ընդ.

Ննջեցելական բանք ԺԸ. ՚ի վերջին
աւուր ... յանձն առեր լինել մարդ
՚ի ... աչն. և արարիչդ յաւիտենից՝
փոխեցար ընդ ժամանակաւ. Տէր Տէր
սրբութեանց և անկարօտ մաքրութեանց. և
եկեր ՚ի տաճարն քառասնօրեայ, զօրէն
նոյն կատարեցեր զարդարութիւն։ Ո՛ որ
բարձեալ սիմէոնի զանպարագրելիդ
՚ի գիրկս իւր հայցէր, որ արձակիչդ ես
կապելոց՝ արձակեա՛ զնս ՚ի խաղաղութիւն։
Ընդ մի ընդ ծերունոյն սիմէոնի վերա
հուպեմք առ քեզ Տէր, Տէր Տէր Տէր զօ
րութեանց, լի են երկինք և երկիր փառօք
քովք ՚ի փրկութիւն մեզ Հօր Որդ[ւոյ]
փառք քեզ։

Ղազար

Ո՛ զղազարու ննջումն որ կանխա
գէտ յառաջ ասէիր. որ և ՚ի բեթանիա
յորջորջեիր՝ զի յարուցես զսիրելին քո։
Արդ՝ և մեք գոչելով առ քեզ, օրհնեալ
որ գաս ՚ի չարչարանս կամաւ հօր՝ ՚ի
փրկութիւն անձանց մերոց։

Յորժամ եկեալ կենարարդ 'ի գե- Զաղաս
րեզմանն Ղազարու · յորժամ եկեալ
կենարարդ 'ի գերեզմանն Ղազարու · ա-
ւետաւոր ձայնիւդ աղաղակէիր ասե-
լով՝ Ղազարէ՛ արի՛ եկ արտաքս։ Իսկ մե-
ռեալն 'ի գերեզմանէն յարեաւ՝ և նոյն
ինքն զանմահն պարգևաց ետուր
սիրելւոյդ, և ա̄ծ այլին ձայնիւդ 'ի գե-
րեզմանէն կոչեցեր։ Ա̄յ՝ և մանկունք
եբրայեցւոց ոստովք օրհնէին զնմաս
Թագաւորութի̄ քո։ Ընդ նոսին և մեք
ասեմք, ովսաննայ՝ օրհնեալ է գալուստ
քո · օրհնութի̄ 'ի բարձունս, օրհնեալ որ
գալոցդ ես անուամբ տ̄ն։

Ցնծա՛ Եդէմ և զարդարեա՛ զառագաստ Ճաշք
քո Սիոն · քանզի՝ ահա Թագաւոր քո
Ք̄ս նստեալ 'ի յաւանակի նորոյ՝ հե-
ծուի ցուցանելով զոր մտանէ յառա-
գաստ քո։ Նա և մեք աղաղակեմք, ովսան-
նայ օրհնեալ եկեալ 'ի յանուն տ̄ն · որ
ունի զմեծ զողորմութի̄։

Ք̄ս յարեաւ 'ի մեռելոց · մահուամբ Զփջէ
զմահ կոխեաց · և յարութե̄ն իւրով
մեզ զկեանս պարգևեաց · նմա փառք
յաւիտեանս Ամէն։

ՁԷՆա Ահաւոր և սքանչելի է խորհուրդ փրկութեան մերոյ. որ անսկիզբն ՚ի հօրէ անճառաբար մարմնացաւ ՚ի կուսէն. խաչի համբերեալ կամաւ և կամեցաւ մահու ամէն իւրով զկենդանութեան մեզ պարգևեաց շնորհս։

ՁԷՆա Բանձի յարեաւ ՚ի մեռելոց քս ած յաւիտենից՝ արարիչ և յարութիւն ազգի մարդկան։ զոր օրհնեն անդադար զին սորութիք հրեշտակք և ամ զուարթունք երկնից։ Ընդ որս գովելով ասեմք փառք սքանչելի յարութեան քո տր։

Համբ Հիացան վերնական բազմութիւնք տեսանելով զքեզ ՚ի հրեղէն կառս բազմեալ՝ սարսեալ ասէին. ով է սա որ դիմեալ գայ յեդովմայ. և եկեալ մտանէ փառօք ՚ի փառս իր. փառք քեզ։

Համբ Որ յանպատում աթոռ նստիս և յանմարմնոցն վերօրհնիս, անհասանելի բանդ ած ՚ի յերկրի երևեցար ճշմարիտ մարդ. զանօրէնութեն կապարեալ զխորհուրդ, խաչի և մահու համբերեցեր. և զհրաշալի զյարութիւնդ քո ցուցեր հզօր զօրութբ. այսօր համբարձար փառօք

 ՚ի

'Ի յերկինս և զկորուսեալն մարմնովդ քո
հրաշափառապէս լուսազարդեցեր։ Զոր
տեսանել Եսայիան՝ նախաձայնէր ասէր,
ո՞վ է սա որ դիմեալ գայ յերկրէ։ Զարմա-
ցեալ պետութեանց երկնից գոչէին առ մի-
միեանս, համբարձէք ի՛շխանք զդրունս
ձեր՝ ի վեր և մտցէ թագաւոր փառաց։ Տէրդ՝
որ յամենայնի կարող ես և հզօր, շնորհեա
և մեզ հանդիպել քեզ ամպովք՝ ի միւս
անգամ քո գալստեանդ. որ միայնդ
ես մարդասէր։

Զքեզ զխոստովանիմք զՍուրբ Հոգիդ և Հոգ
երկրպագանեմք. որ ես պատճառ կենդա-
նութեան եղելոց և խաղաղարար աշխարհի։
որ զոգիսն աշակերտացն բազում
գիտութեամբ լցեր. և՝ ի հրեղէն լեզուս բա-
ժանեալ անձնաւորելովք ցուցար նոցա. աղա-
ղակեմք Տէր խնայեա և կեցո զմեզ։

Այսօր՝ ի հրեղէն լեզուս բաժանեալ ԵՀՔ
հանգեր յառաքելսն՝ լուսաւորելով զնոսա.
և այժմ աղաչեմք ըզքեզ Սուրբ Հոգիդ
Աստուած, որ ես պատճառ կենդանութեան
եղելոց և խաղաղարար աշխարհի,
խնայեա և կեցո զմեզ։

գկձ Սոյ և մեք զհոգիդ որ ա՟ծ ը՟ հօր և
ը՟ որդւոյ միասնական խոստովանիմք. և
հայցեմք մեզ ՚ի վերնատանէ ողէդ զհոգե
ւորական խաղաղութիդ. տ՟ր փառք քեզ:
ձւր Երևի տ՟րդ այսօր աշակերտացդ ՚ի թա
փորական լերինն. և աշակերտացդ զոր
հուրելք առաքելին ասելով. արա
ցուք երիս տաղաւարս մի քեզ, և մի մո
սիսի և մի եղիայի: Արդ՝ և մեք բանա
ւոր հօտքս երգեմք ը՟ քո ճշմարիտ վկայ
իցդ. աղաչեմ՝ ՚ի մեզ զլոյս քո շնորհացդ
՚ի քոյ միւսանգամ գալստեանդ և կեցո:
ծառ Առաջի պատուական ամենայաղթ խաչի
քոյ անկանիմք երկրպագելով և խնդրեմք
զթողութիւն յանցանաց մերոց. քանզի սո
վաւ բարձեր զդատապարտութիւն ազգի
մարդկան: Եւ այժմ վ՟ս մեր ա՟ծ այնմ
քոյ նշանի շնորհեա զերկնային զխա
ղաղութիւնդ ա՟մ աշխարհի:
էշ ցոծ նէ Տ՟ր մեր և փրկիչ յ՟ս ք՟ս, որ աղօթիւք և
միջնորդութբ բազմաչարչար վկայիւն քո
և հօրն մերոյ ս՟րբյն գրիգորի լուսաւոր
չին, մեծաւ փառօք և բազմութբ զօ
րացդ լուսեղինաց իջեր յերկնից ՚ի դաշ


տըն

տըն արարատեան, 'ի յայցելութ փրկու-
հօտին քոյ ազգիս հայոց և 'ի ցուցումն
յատկենի սիրոյդ և մեծ ողորմութեդ.
և ոսկէ ուռամբ քաղեսցես զխարս ան-
դընդոց, և հալածեսցես զգունդս սան-
դարամետականց. ուր և լուսաձև յօրին-
մամբ հրաշակերտեսցես զմայր աթոռն
մեր զոր էջ. միածին. և արարեր զնա
շտեմարան անսպառելի շնորհաց ածայ-
նոց՝ 'ի լինիլ ծնող՝ դաստիարակ և կա-
տարելագործ ի սմ եկեղեցեաս հայաս-
տանեայց: Արդ՝ պաղատեմ զնա անարատ
հաստատուն և անսասան, 'ի պայծառա-
զարդութ եկեղեցեացս մերոց և մա-
նկանցս սոցին մինչև 'ի կատարած աշխար-
հի. յորոց միշտ փառաւորի ամենասուրբ
ռացար զիս. ընդէ՞ր տրտում գնամ
ես 'ի նեղել թշնամւոյ իմոյ։
Առաքեա՛ Տէր զլոյս քո և զճշմարտութիւն
քո. զի առաջնորդեսցեն ինձ և հան-
ցեն զիս 'ի լեառն սուրբ և 'ի յարկս քո։
Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած՝
որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։
Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ
Աստուած Աստուած իմ։
Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ.
կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ
Աստուած. խոստովանեսցուք նմա. փրկիչ երե-
սաց իմոց Աստուած է։
Տէ՛ր յօգնել ինձ նայեաց. և տէր
յընկերել ինձ փութա՛։
Ամաչեսցեն և յամօթ լիցին որք խնդ-
րէին զանձն իմ. դարձցին յետս և
ամաչեսցեն որք խորհէին ինձ չար։
Դարձցին առ ժամայն ամաչեցեալ
որք ասէին ինձ վա՛շ վա՛շ։
Ցնծասցեն և ուրախ լիցին 'ի քեզ



ա

ա՟մ՟ք՟եան ոյք խնդրեն զքեզ Տ՟ր։
Ասասցեն յա՟մ ժամ մեծ է Ա՟ծ ոյք
սիրեն զփրկութ՟ի քո։
Ես աղքատ և տնանկ եմ Ա՟ծ՝ օգ-
նեա՛ ինձ․ օգնական և փրկիչ իմ ես
դու Տ՟ր իմ մի՛ յամենար։
Տուր զօրութ՟ի ծառայի քո․ կեցո՛
զորդի աղախնոյ քո․ և արա՛ առ իս
նշան բարութեան։
Տեսցեն ատելեաք իմ և ամաչեսցեն․
զի դու Տ՟ր օգնեցեր ինձ և մխիթա
րեցեր զիս։ Փառք հօր՛՛։
Ասէ։
Շնորհեա՛ մեզ տէր ՚ի գիշերի
զերկնային ըղձաւորութ՟ի քո՟․ և
պահեա՛ զմեզ ՚ի պատրանաց. Թըշ
նամւոյն ամենայնոխ զօրութ՟ե՝ մ՟ի
խառնի քոյս։ Տ՟ր Ա՟ծ փրկութ՟ե իմոյ․ ՚ի
տուէ կարդացի և գիշերի առաջի
քոյ։ Մտցեն աղօթք իմ առաջի քո
Տ՟ր․ խոնարհեսցի ունկն քո ՚ի լսել զ
ձայն իմ։ Լ՟կեսցէ առ մեզ Տ՟ր պա
հապան ՚ի քէն և պահեսցէ զմեզ յա՟մ
ժամ։ Շ՟աքեա՛ ՚ի մեզ Տ՟ր ըղ զօրու-


թեն

սրբոյ խաչին որ պահեցեր զմեզ յայս
ժամ։ Արժանի արա տէր զերեկս
զայս խաղաղութեամբ և առանց փորձութեան
անցո՛ ըզմեզ։ Արժանաւորեա տէ՛ր
զգիշերս զայս խաղաղութեամբ և առանց
մեղաց պահելով զմեզ։ Ընդ մեզ
տէր ած՛ գիտասջիք հեթանոսք և պար
տեցարո՛ւք. զի ած ընդ մեզ է։
Լուարուք զայս 'ի ծագաց մինչև
'ի ծագս երկրի. զի ած։ Եւ հզօրա
ցեալքդ պարտեցարո՛ւք. զի։ Եւ զի
թէպէտ և դարձեալ զօրանայք՝ դարձեալ
'ի պարտութիւն մատնեսջի՛ք. զ։ Եւ զխոր
հուրդն զոր խորհիք խափանէ տէր՛. զ։
Եւ զբանն զոր խօսիք մի՛ մնասցէ առ
ձե՛զ. զի։ Եւ քանզի յերկիւղէ ձերմէ
մեք ո՛չ երկիցուք և ո՛չ խռովեսցո՛ւք. զ։
Եւ զտէր ած մեր փառաւոր արաս
ցուք և նա եղիցի մեզ յերկի՛ւղ. զ։
Եւ յուսացեալ եղիցուք մեք 'ի նա
և նմա եղիցի մեզ 'ի սրբութիւն. զի։ Եւ
յուսացեալ եղիցուք մեք 'ի նա և նմա
եղիցի մեզ 'ի փրկութիւն՛. զի։ Եւ ահա
ւասիկ ես և մանկունք իմ զոր ետ ինձ
ած

ած՛. ողր։ Դու ժողովուրդ որ նստէր
ի խաւարի՝ ետես լոյս մեծ՛. ողր։
Դու որ բնակեալ էք ի խաւարի եւ
ի ստուերս մահու՝ լոյս ծագեցի
առ նմա՛. ողր։ Դու քանզի մանուկ ծը
նաւ որդի եւ տուաւ մեզ՛. ողր ած։
Դու որոյ իշխանութիւն եղեւ ի վր ուսոց
նորա՛. ողր։ Դու որ կոչէն անուն նր
մեծի խորհրդոյ հրեշտակ. ողր։ Դու զքան
չելի խորհրդական՛. ողր։ Դու ած հզ
զօր իշխան՛. ողր։ Դու իշխան խաղա
ղութեան հայր հանդերձելոյ յաւիտե
նից՛. Տր ած ը մեզ է։ Դու փառք
Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ։

Այժմ եւ միշտ եւ՛։

մաղ Ի մերձենալ երեկոյիս՝ համբառնամք
զձեռս մեր ի սրբութի. զոր ինչ մեղաք
այսօր խորհրդով բանիւ կամ գոր
ծով՝ ի յանկողինս մեր զղջանալով։
Խոստովանեալ եղիցուք զգաղտնիս սրտից
մերոց ծածկագիտին այ. յուսալով
յողորմութիւնքն։ Դու մեք միաբան գո
չեսցուք՝ յիշեա զմեզ տէր յորժամ
գաս արքայութեամբ քով եւ ողորմեա մեզ։


Դու

Այս եւս խոստովանութեան շնէք աղ"։

Գոհացարուք զտ̅նէ որ խաւրով ո- քրզ
ղորմութ̅ն առաջնորդեաց մեզ 'ի
գործս առ̂ընձեան. և շնորհեաց մեզ
միաբան գալ հասանիլ 'ի հանգիստ
գիշերիս։ Այս մեք յայսմ ժամ աղա-
չեսցուք զմարդասէրն ա̅ծ լինիլ պա-
հապան անձանց մերոց. և նա խաւրով
ողորմութ̅ն պահեսցէ զմեզ. և ա-
ռաջնորդել հասուսցէ յիւր բարու-
թ̅ն հանգիստն. զոր խոստացաւ սի-
րելեաց իւրոց ճշմարիտն ա̅ծ յո̅ քո̅

Տ̅ր ամենակալ կեցուս"։

Զ հանգիստ գիշերիս խաղաղու"։
Զ հրեշտակ խաղ"։ Զ քաւութի"։
Զ ա̅նեյ խաղ"։ Այս եւս միա"։ Զան"։

Ողորմեա մեզ"։

Տ̅ր բարերար որ մեծաւ գթութ̅բ աղ
քով պատրաստեցեր զյաւիտենական
հանգիստն առաքինութեամբ աշխա-
տելոցն. և կոչեցեր առ քեզ քաղցր
ձայնիւ զծանրաբեռնեալսն և զաշ-
խատեալսն մեղօք՝ հանգիստ նոցա խոս-
տանալով։ Շնորհեա և մեզ տ̅ր ան-



խռով

խռով խաղաղութեամբ զգիշերս անցու-
ցանել․ և ՚ի ծանրութենէ մեղաց զմեզ
խոստովանեալքս՝ ապաշխարութեան ողորմութեամբ
քով․ և արժանաւորեա՛ մշտնջենաւոր
հանգստեանն ընդ ամենայն սրբս քո։
Եւ գոհանալով փառաւորեսցուք
զքեզ ընդ հօր և ամենասուրբ հոգւոյդ։
Այժմ և միշտ և՛։

## Խաղաղութիւն Ամենեցուն։

Պարգեւատու բարեաց և աղբիւր
խաղաղութեան տէր Աստուած մեր յամենայն սատա-
նայական խռովութեանց խաղաղացո՛ զմ-
իտս մեր և զխորհուրդս ՚ի գիշերիս
յայսմիկ և յամենայն ժամանակի։ Եւ զմեզ
առաջնորդեալք յանցաւոր կենցա-
ղոյս՝ ժամանեսցուք յաւիտենական
երկնից արքայութեան քո․ զոր պատրաս-
տեցեր ՚ի սկզբանէ Տէր սրբոց քոց։
Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորես-
ցուք զհայր և զորդի և զսուրբ հոգի՛։

---

Սաղմոս, 26։

Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞
երկեայց․ տէր ապաւէն կենաց իմոց՝
ես յումմէ՞ դողացայց։

Ի մերձենալ աւուրս չարաց՝ ուտել զմարմինս իմ. նեղիչք իմ և թշնամիք իմ. նոքա տկարացան և անկան։

Թէ պատրաստեսցի ՚ի վերայ իմ պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ. և թէ յարիցէ ՚ի վերայ իմ ճակատամարտ, սակայն և այսուիկ ՚ի քեզ տէր յուսացայ։

Զմի խնդրեցի ՚ի տեառնէ և զայն աղաչեմ, բնակել ինձ ՚ի տան տեառն զամենայն աւուրս կենաց իմոց։

Տեսանել ինձ զվայելչութիւն տեառն, և հրաման առնուլ ՚ի տաճարի նորա։

Ծածկեաց զիս ՚ի խորանի իւրում յաւուր չարի. ընդ յարկաւ արար զիս ՚ի ծածկոյթ խորանի իւրում։

Ի վիմի բարձր արարեր զիս. և այժմ բարձր արա զգլուխ իմ ՚ի վերայ թշնամեաց իմոց։

Շուրջ եղէց և մատուցից ՚ի խորանի նորա պատարագ օրհնութեան. օրհնեցից և սաղմոս ասացից տեառն։

Լուր տէր ձայնի իմում զոր կարդացի առ քեզ. ողորմեա ինձ և լուր ինձ՝ զի քեզ ասաց սիրտ իմ. և խնդրեցին ե-



րեսք

րեսք իմ զերեսս քո տր խնդրեցից:
Մի՛ դարձուցաներ զերեսս քո յի-
նէն. և մի՛ խոտորիր բարկութեամբ ՚ի
ծառայէ քումմէ:
Օգնական իմ լե՛ր տր և մի՛ անարգեր զիս
և մի՛ թողուր զիս ած փրկիչ իմ:
Հայր իմ և մայր իմ թողին զիս. և
տր ընկալաւ զիս:
Օրէնսգէտ արա զիս տր ՚ի ճանա-
պարհի քում. և առաջնորդեա ինձ
՚ի շաւիղս քո ուղիղս:
Վասն թշնամեաց իմոց մի՛ մատներ
զիս ՚ի ձեռս նեղչաց իմոց:
Յարեան ՚ի վր իմ վկայք մեղաց. և
ստեցին անձն յանօրէնութիւն իւրեանց:
Հաւատամ տեսանել զբարութիւն տն
յերկրին կենդանեաց. համբեր տն
և քաջալերեաց. զօրասցի սիրտ քո և
համբեր տն: Փառք հօր":

---

## Նոյն Տեառն Ներսէսի:

Աղաչեմ սիրով հայրդ գթած
ի՛ քո ստեղծեալ գործըս ձե-
ռաց՝. և ընդանիկս հրեշտա-
կաց

կաց՝ տո՛ւր պահպանս մեզ տկարացս՝.
փրկեա՛ զանձինս ՚ի փորձանաց՝ ՚ի խա
ւարի շրջօղ դիւաց՝. զի՛ ՚ի տուըն
ջեան և գիշերի՝ տացուք քեզ փառս
անլռելի՛։ Ի՛րն անեղ անըսկը՛զ
բան՝ ծընունդ անճառ որդի և բան՝.
որ արարեր ըզ տի՛ւ գործոյ՝ և ըզ՛
գիշեր ՚ի հանգիստ քնոյ՝. տո՛ւր ՚ի նըն
ջել աչաց մարմնոյ՝ արթուն լինել
մեզ ըստ հոգւոյ՝. զի՛։ Բարուն հո
գւոց բանաւորաց՝ աղբիւր լուսոյ
բաշխօղ շնորհաց՝. ՚ի փակել դրանց
բնութ̃եց մարմնոց՝ լո՛յս տուր աչաց
սըրտից մերոց՝. ՚ի գիշերաց առ քեզ
կանխել՝ ընդ հրեշտակացն օրհնաբա
նել՝. զի՛։ Սուրբդ սրբոց երրոր
դութի՝ ըզ մեզ մաքրեա՛ քեզ բնակու
թի՝. շնորհեա՛ ընդ մանկանցն առա
գաստի՝ հանգչել ընդ քեզ ՚ի՛ յան
կողնի՝. տո՛ւր ըզհայցուա՛ծ բարեկա
մին՝ ըզփոխ երից նըկանակին՝. զի՛։
Արևելէ լոյս ըստեղծեր՝ զտի՛ւ և
զգիշեր բաժանեցեր՝. ծագեա՛ մեզ
տ̃ր ՚ի գիշերի՝ ըզճառագայթս խմա

նաս

նողի՝ · տուր յամ ժամանակի՝ զպահ
պանօղ աջ քո հովանի՝ · զի՛ : Սիրոյ քո
հուր արկեալ յերկիր՝ բորբոքեսցի
'ի հոգիս մեր · զխորհուրդ սըրտից
մեր մաքրեսցէ՝ զլոյս գիտութեան
քո փայլեսցէ · 'ի քնոյ մահու զմեզ
զարթուսցէ՝ զմիտս բոցով քո վա
ռեսցէ · զի՛ : Ի քեզ նայիմք լոյս
անմատոյց՝ 'ի զգայական ծածկեալ
լուսոյ · որ վասըն մեր եդար 'ի գբի՝
և նընջեցեր 'ի տապանի · առ մեզ նըն
ջեալ արթուն բնութի՝ հեղեալ զքա
րըն ներգործութի՝ · զի՛ : Լոյս լու
սոյ անըստուերի՝ պայծառանօք կամք
առաջի՝ · որ փակեալ դրամբք յերե
կոյին՝ երևեցար մետասանիցն՝ · ընդ
Թովմայի առ քեզ գոչեմք՝ տ՛ր և ա՛ծ
զքեզ դաւանեմք՝ · էջ և առ մեզ յերե
կոյիս՝ և տուր զողջոյն քո 'ի հոգիս :
Թաղեալքս ընդ քեզ տ՛ր աղաչեմք՝ մեզ
յօգնութի՝ նորեալ հայցեմք՝ · պահա
պանդ Իսրայէլի՝ անձանց մերոց լե՛ր
հովանի · օթեւան առ մեզ խաղաղարար
զի ննջեսցուք անխռովաբար՝ · և՛


ընդ

ընդ առաւօտըս կանխեսցուք՝ որհ-
նել զքեզ ընդ Հօր Հոգւովդ։
Գոչմանն փողոյն Գաբրիէլի՝ որ ՚ի վերջ-
նումն գիշերի՝ լուսեալ առաւ զմեզ առ
ժամսն՝ և յաջակողմն օթեւաց դասուն՝ ։
անշէջ վառեալ զլոյս լապտերաց՝ ըստ
իմաստուն հինգ կուսանաց՝ ։ զմեզ ընդ
մեսայիդ ՚ի յառագաստ՝ հարսանեց
հոգւոյդ մտցուք ՚ի փառս։
Ծայրածեա՛լ ՚ի մէնջ տէ՛ր նըշանաւ խա-
չի քոյ՝ ։ զընդդիմամարտ և զաներև-
ոյթ գազանն՝ ։ և մե՛զ տուր յապակա-
նութիւն դ.քո ժառանգութեան։
Բարեխօսեա՛ վասըն մեր ածածին
մարիամ՝ ։ որ ծընար զտէր աստուածն
որ հաւանեցերըն զինէն՝ ։ ա՛մենազօր և
պաշտպանեցելի փառօքն երկնից։
Սաղմոս։
Տէ՛ր մի՛ դարձուցաներ զերեսս քո յի-
նէն։ Տէ՛ր բարերար աղաչեմ զ.քեզ
օգնական իմ լեր։ Տէ՛ր մի՛ անարգեր
զիս։ և մի՛ թողուր զիս ած փրկիչ իմ։
Դա

## Քարոզ:

Աղաչեսցուք զամենակալն ած և խնդրեսցուք ի նմանէ զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութեն որ երկեալ պահեսցէ զմեզ յերկիւղէ գիշերիս. ի դիւական խռովութենէ ամբողջ պահեսցէ զհոգի և զմարմինս մեր մինչև ի կատարածն ժամնկի ամաց մերոց: ամէն:

## Աղօթք:

Շնորհատու բարեաց՝ յամենայն առատ անմահ Տր. աղաչեմք զքեզ փարատեա յանձանց մերոց զաղջամղջին և զխաւարայինն խորհուրդս: ի պատրանաց բանսարկուին պահեա զմեզ և շնորհեա մեզ հաւատով արժանի լինել յամենայնի Ս. Երրորդութիւն ի հայր և յորդի և ի սբ հոգին այժմ և:

## Սաղմոս. 118:

Երանեալ են անբիծք ի ճանապարհի. և որք գնան յօրէնս Տեառն: Երանի՝ որք քննեն զվկայութիւնս նորա. բոլորով սրտիւ իւրեանց խնդրեսցեն զնա:

Ո՛չ թէ ոյք գործեն զանօրէնութիւն ի ճանապարհս նորա գնացին։ Դու պատուիրեցեր զպատուիրանս քո ի պահել յոյժ։ Երանի թէ յաջողեալ էին իմ ճանապարհք իմ ի պահել իմ զարդարութիւնս քո։ Յայնժամ ես ո՛չ ամաչէի ի զգուշանալ իմ ի պատուիրանս քո։ Խոստովան եղէց քեզ տէր յուղղութիւն սրտի իմոյ․ որպէս ուսայց զիրաւունս արդարութեան քո։ Զիրաւունս քո պահեցից․ մի՛ թողուր զիս մինչ իսպառ։

Ո՞ւ ուղղեսցէ երիտասարդ զճանապարհս իւր․ այլ ի պահել զբանս քո։ Ամենայն սրտիւ իմով խնդրեցի զքեզ․ մի՛ մերժեր զիս ի պատուիրանաց քոց։ Ի սրտի իմում թաքուցի զբանս քո՝ որպէս զի մի՛ մեղայց քեզ։ Օրհնեալ ես դու տէր․ ուսո՛ ինձ զարդարութիւնս քո։ Շրթամբք իմովք պատմեցից զամենայն իրաւունս բերանոյ քոյ։ Ի ճանապարհս վկայութեանց քոց զուարճացայ․ որպէս յամենայն մեծութեան։ Ի պատուիրանս քո հոգացայց․ և

զգուշացայց ՚ի հրամանս քո։
Զիրաւունս քո խօսեցայ. եւ ոչ մոռացայ զբանս քո։ Հատո՛ ծառայի քում, զի կեցից եւ պահեցից զբանս քո։ Զարթո՛ զաչս իմ եւ նայեցայց
ի սքանչելիս օրինաց քոց։
Պանդուխտ եմ ես յերկրի. մի՛ թաքուցաներ յինէն զպատուիրանս քո։
Փափագեաց անձն իմ ՚ի ցանկալ ինձ յիրաւունս քո յամ ժամ։ Սաստեցեր ամբարտաւանից. անիծեալ որք խոտորեցան ՚ի պատուիրանաց քոց։
՚Ի բաց արա յինէն զնախատինս եւ զարհամարհանս. զի զվկայութիւնս քո խնդրեցի։ Քանզի նստան իշխանք եւ չարախօսէին զինէն. այլ ծառայ
քո՝ խորհէր յիրաւունս քո։
Զի վկայութիւնք քո խօսք իմ էին. եւ խորհուրդք իմ յարդարութիւն քո։
Մերձեցաւ անձն իմ ՚ի հող. տէր՝
կեցո՛ զիս ըստ բանի քում։
Զճանապարհս իմ պատմեցի քեզ եւ լուար ինձ. ուսո՛ ինձ զարդարութիւնս քո։
՚Ի ճանապարհս արդարութեանց քոց
իմաս

իմաստուն արա զիս. և քննեցից զըսքանչելիս քո։ Տքնեցաւ անձն իմ առ ի ձանձրանալ. հաստատեա զիս ի բանս քո։ Զճանապարհս մեղաց ի բաց արա յինէն. և յօրէնս քո ողորմեա ինձ։ Զճանապարհս ճշմարտութեան քո ընտրեցի. և զիրաւունս քո ես ո՛չ մոռացայ։ Մերձեցայ ես ի վկայութիւնս քո տէր. մի՛ յամօթ առներ զիս։ Ի ճանապարհս պատուիրանաց քոց ընթացայ. զի անդորր արարեր սըրտի իմոյ։ Օրէնսդէր արա զիս տէր ի ճանապարհս իրաւանց քոց. և խնդրեցից զնա յամ ժամ։

Իմաստուն արա զիս տէր և քննեցից զօրէնս քո. և պահեցից զնա բոլորով սրտիւ իմով։ Առաջնորդեա ինձ ի շաւիղս պատուիրանաց քոց տէր. զի ընդ նմա հաճեցայ։ Խոնարհեցո զըսիրտ իմ ի վկայութիւնս քո տէր՝ և մի՛ յագահութիւն։ Դարձո զաչս իմ զի մի՛ տեսից զնանրութիւն. ի ճանապարհս քո կեցո զիս։ Հաստատեա ծառայի քում զբան քո յերկիւղ քո։



Հան

Հա՛ն յինէն զնախատինս զոր և կարծեցի. զի դատաստանք քո քաղցր են։ Ահա ցանկացայ պատուիրանաց քոց Տէր. յարդարութեան քում կեցո՛ զիս։ Եկեսցէ 'ի վերայ իմ ողորմութիւն քո Տէր.
և փրկութիւն քո ըստ բանի քում։
Տաց պատասխանի ոյք նախատեն զիս բանիւք. զի ես 'ի բանս քո յուսացայ։ Մի՛ 'ի բացեայ առներ 'ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչև յոյժ. զի յիրաւունս քո յուսացայ։ Պահեցի զօրէնս քո յամենայն ժամ. յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։ Գնայի ես յանդորրու՝ զի զպատուիրանս քո խնդրեցի։ Խօսէի ըզվկայութիւնս քո առաջի թագաւորաց և ոչ ամաչէի։ Խորհէի 'ի պատուիրանս քո՝ զոր սիրեցի։ Համբարձի զձեռս իմ 'ի պատուիրանս քո զոր սիրեցի. և խորհէի յարդարութեան քում։ Յիշեա՛ զբան ծառայի քո, յոր և յուսացուցեր զիս։ Այն մխիթարեսցէ զիս 'ի խոնարհութեան իմում.
զի բան քո կեցոյց զիս։

 Մ

Մերձաւորանք անիրաւեցան յիս յոյժ. այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ։ Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից Տէր և մխիթարեցայ։

Տրտմութիւն կալաւ զիս ՚ի մեղաւորաց. և ոյք թողին զօրէնս քո։

Գովելի են ինձ իրաւունք քո ՚ի տեղւոջ պանդխտութեան իմոյ։

Յիշեցի ՚ի գիշերի զանուն քո Տէր. և պահեցի զօրէնս քո։

Այս եղև ինձ ճանապարհ ՚ի կեանս. զի զարդարութիւնս քո խնդրեցի։

Բաժին իմ ես դու Տէր. ասացի պահել զօրէնս քո։ Աղաչեցի զերեսս քո բոլորով սրտիւ իմով. ողորմեա ինձ ըստ բանի քում։ Խորհեցայ ՚ի ճանապարհս իմ. և դարձուցի զոտս իմ ՚ի վկայութիւնս քո։

Պատրաստեցայ և ոչ խռովեցայ. զի պահեցից զպատուիրանս քո։

Տուունք մեղաց պատեցան զինև. այլ զօրէնս քո ես ոչ մոռացայ։

՚Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լի-

նիլ առ քեզ վասն իրաւանց և ար_
դարութե քո։ Հաղորդէի ես ամ
երկիւղածաց քոց՝ որոց պահեալ
էին զպատուիրանս քո։
Ողորմութեամբ տն լի եղև երկիր․
զարդարութիս քո ուսո ինձ։
Քաղցրութի արարեր ընդ ծառայի
քում տր ըստ բանի քում։
Քաղցրութի՝ զխրատ և զգիտութի ու_
սո ինձ․ զի՛ի պատուիրանս քո ես հա
ւատացի։ Մինչև խոնարհեալ էի ես
մեղայ․ վսկ զբանս քո պահեցի յայժ։
Քաղցր ես դու տր՝ և քաղցրութե
քով ուսո ինձ զարդարութիւնս քո։
Բազմացան յիս անիրաւութիք ամ_
բարտաւանից․ այլ ես բոլորով սրտիւ
իմով քննեցի զպատուիրանս քո։
Մածան որպէս կաթն սիրտք նոցա․
այլ ես զօրէնս քո խոկացայ։
Բարի է ինձ զի խոնարհ արարեր զիս
ոպ ուսայց զարդարութիւնս քո։
Բարի են ինձ օրէնք բերանոյ քո․
քան զհազարս ոսկւոյ և արծաթոյ։
Ձեռք քո արարին և ստեղծին զիս․

 իմաս

իմաստուն արա զիս՝ և ուսայց զպա
տուիրանս քո։ Երկիւղածք քո տես
ցեն զիս և ուրախ եղիցին. զի ես 'ի
բանս քո յուսացայ։ Ծանեայ տր՝ զի
արդարութք են դատաստանք քո.
յիրաւի՛ խոնարհեցուցեր զիս։
Եղիցի ողորմութի քո 'ի մխիթարել
զիս ըստ բանի քում զծառայս քո։
Եկեսցեն յիս գթութիք քո և կե
ցից. զի օրէնք քո խօսք իմ էին։
Ամաչեսցեն ամբարտաւանք՝ որք 'ի
տարապարտուց անիրաւեցան յիս.
այլ ես հոգացայց 'ի պատուիրանս քո։
Սրատեսցեն զիս երկիւղածք քո՝
և ոյք ճանաչեն զվկայութիս քո։
Եղիցի սիրտ իմ անբիծ յարդարու
թեան քում զի մի՛ ամաչեցից։
Կարօտացաւ անձն իմ 'ի փրկութիս
քո. զի ես 'ի բանս քո յուսացայ։
Սպասեցին աչք իմ բանի քում. ա
սացի՝ երբ մխիթարեսցես զիս։
Եղէ ես ոպ տիկ 'ի պարզի. զի զար
դարութիս քո ես ո՛չ մոռացայ։
Քանի՞ ինչ են աւուրք ծառայի քո


երբ

երբ արասցես ինձ իրաւունս ’ի հա
լածչաց իմոց։ Պատմեցին անօրէնք
զխորհուրդս․ այլ ո՛չ ոպ̃ զօրէնս քո։
Ամենայն պատուիրանք քո ճշմարիտ
են․ ’ի նանիր հալածեցին զիս՝ օգ
նեա՛ ինձ։ Փոքր միւս եւս՝ եւ կորու
սանէին զիս յերկրի․ այլ ես ո՛չ թո
ղի զպատուիրանս քո։ Ըստ ողորմու
թեան քում կեցո՛ զիս․ եւ պահեցից
զվկայութիւնս բերանոյ քո։
Յաւիտեան տէր բան քո կայ յեր
կինս․ յազգէ մինչեւ յազգէ ճշմար
տութի̃ քո։ Հաստատեցեր զերկիր՝
եւ կայ։ Հրամանի քում մնայ տիւ․
զի ա̃մքեան ծառայք քո են։
Եթէ ոչ օրէնք քո խօսք իմ էին,
կանխաւ ես արդեօք կորուսեալ էի
’ի խոնարհութեան իմում։
Յաւիտեան ո՛չ մոռացայց զարդա
րութ̃իս քո․ զի նոքօք կեցուցեր զիս։
Քո եմ ես եւ կեցո՛ զիս․ զի զարդա
րութիւնս քո խնդրեցի։ Ինձ սպա
սեցին մեղաւորք ’ի կորուսանել․ զի
զվկայութիւնս քո ես ’ի միտ առի։

Յա̃մ

Յամ կատարածի տեսի զվախճան· յոյժ անդորր էին ինձ պատուիրանք քո։ Որպ սիրեցի զօրէնս քո· զօրհանապազ խօսք իմ էին։ Քան զթշնամիս իմ իմաստուն արարեր զիս ՚ի պատուիրանս քո · զի յաւիտեան իմ էին։ Քան զամ ուսուցիչս իմ իմաստուն եղէ · զի վկայութիւնք քո խօսք իմ էին։ Քան զծերսն իմաստուն եղէ · զի զպատուիրանս քո քննեցի։ Յամ ճանապարհաց չարաց արգելի զոտս իմ· որպ զի պահեցից զբանս քո

Յիրաւանց քոց ես ոչ խոտորեցայ զի դու օրէնսդիր արարեր զիս։

Որպ զի քաղցր են ՚ի քիմս իմ բանք քո քան զմեղր բերանոյ իմոյ։

Ի պատուիրանաց քոց իմացեալ ատեցի զամ ճանապարհս չարաց · զի դու օրէնսդիր արարեր զիս։

Ճրագ են բանք քո ոտից իմոց · լոյս տան շաւղաց իմոց։ Երդուայ հաստատեցի · զի պահեցից զամենայն իրաւունս արդարութեան քո։

Խոնարհ եղէ մինչև յոյժ · Տր կեցո

զիս ըստ բանի քում։ Ընդ կամս բերանոյ իմոյ հաճեսցի Տէր. և զիրաւունս քո ուսո ինձ։ Անձն իմ ի ձեռս քո է յամենայն ժամ. և զօրէնս քո ես ոչ մոռացայ։ Եդին ինձ մեղաւորք որոգայթ. ի պատուիրանաց քոց ես ոչ խոտորեցայ։ Ժառանգեցի զվկայութիւնս քո յաւիտեան. զի ցնծութիւն է սրտի իմոյ։ Խոնարհեցուցի զսիրտ իմ առնել զարդարութիւնս քո յաւիտեան վասն հատուցման։ Զանօրէնս ատեցի և զօրէնս քո սիրեցի։ Օգնական և ընդունիչ իմ ես դու. և ես ի բանս քո յուսացայ։ Ի բաց եղերուք յինէն չարք. և քննեցից զպատուիրանս Այ իմոյ։ Օգնեա ինձ ըստ բանի քում և կեցո զիս. և մի՛ յամօթ առներ զիս ի յուսոյ իմմէ։ Օգնեա ինձ և ապրեցո զիս. և խորհեցայց զիրաւունս քո յամենայն ժամ։ Անարգեցեր զամենեսեան որք ապստամբք եղեն յարդարութենէ քոց. զի անիրաւութիւն էին խորհուրդք նոցա։ Յանցաւորս հա-

մարեցայ զամ մեղաւորս երկրի. վա
այսորիկ սիրեցի զպատուիրանս քո։
Բեւեռեա՛ ընդ երկիւղ քո զմար-
մին իմ. զի ՚ի դատաստանաց քոց
երկեայց յոյժ։

Արարի իրաւունս և արդարութի. մի՛ մատներ զիս ՚ի ձեռս նեղ չաց իմոց։ Ընկա՛լ զծառայս քո ՚ի բա րի. զի մի՛ ամբարտաւանք զրկես ցեն զիս։ Սպասեցին աչք իմ փրկու թե քում տր. և բանից արդարութե քո։ Արա՛ ընդ ծառայի քում տր ըստ ողորմութեան քում. զարդա րութիս քո ուսո՛ ինձ։ Ծառայ քո եմ ես՝ իմաստո՛ւն արա զիս. և ծա նեայց զվկայութիս քո։ Ժամ է պաշ տել զտր. խափանեցին զօրէնս քո։ Վայսորիկ սիրեցի զպատուիրանս քո քան զամ ոսկի և զտպազիոն։
Զամ պատուիրանք քո յաջողեցան ինձ զի ատեցի ես զճանապրհս չարաց։
Սքանչելի են վկայութիք քո. վա այսորիկ սիրեաց զնս անձն իմ։

Յայտնութիւն բանից քոց լուսա-
ւորէ. և իմաստուն առնէ զտղայս։
Զբերան իմ բացի և ածի զհոգի. ՚ի
պատուիրանս քո փափագէց անձն իմ
Նայեա՛ առիս և ողորմեա՛ ինձ. ըստ
իրաւունս սիրողաց անուան քո։
Զճանապարհս իմ ուղի՛ղ արա ինձ
ըստ բանի քում. և մի՛ տիրեսցեն ինձ
ամենայն մեղք։ Փրկեա՛ զիս ՚ի զըր-
պարտութէ մարդկան. և պահեցից
զպատուիրանս քո։ Երեւեցո՛ զե-
րեսս քո ՚ի ծառայս քո. և ուսո՛ ինձ
զարդարութիս քո։ Ակունք ջուրց
իջին յաչաց իմոց՝ զի ո՛չ պահեցին զօ-
րէնս քո։ Արդար ես դու տէր. և
ուղիղ են դատաստանք քո։
Պատուիրեցեր զարդարութի վկայու-
թեց քոց տէր. և ճշմարիտ են յոյժ։
Մաշեաց զիս նախանձ քո զի մոռա-
ցան զբանս քո թշնամիք իմ։
Ընտրեա՛լ է բան քո յոյժ. և ծառայ
քո սիրեաց զայն։ Մանուկ եմ ես և
արհամարհեալ. և զարդարութիս քո
ես ո՛չ մոռացայ։ Արդարութիւն քո
ար

արդարութիւն յաւիտենից. և օրէնք
քո ճշմարիտ են։ Նեղութիւնք և
վիշտք գտին զիս. և պատուիրանք քո
խօսք իմ էին։ Արդարութեամբ են
վկայութիւնք քո յաւիտեան. իմաստուն
արա և կեցո զիս։ Աղաղակեցի առ քեզ
բոլորով սրտիւ իմով. լուր ինձ տէր՝
զի զարդարութիւնս քո խնդրեցի։
Աղաղակեցի առ քեզ և փրկեա զիս.
և պահեցից զվկայութիւնս քո։
Կանխեցի տարաժամու աղաղակեցի.
և ես ՚ի բանս քո յուսացայ։
Կանխեցին աչք իմ առաւօտու ՚ի
խօսել ինձ զբանս քո։ Զձայնի իմում
լուր տէր ըստ ողորմութեան քում.
և յիրաւունս քո կեցո զիս։
Մերձեցան յիս հալածիչք իմ
զանօրէնութիւն. զի յօրինաց քոց հե-
ռի եղեն։ Մերձ ես դու տէր. և ամ
պատուիրանք քո ճշմարիտ են։
՚Ի սկզբանէ ծանեայ ՚ի վկայութեանց քոց
տէր. զի յաւիտեան հաստատեցեր զնոսա։
Տես զխոնարհութիւն իմ և փրկեա
զիս. զի զօրէնս քո ես ոչ մոռացայ։

Դատեա՛ զդատաստան իմ եւ փրկեա՛
զիս. եւ ըստ բանի քում կեցո՛ զիս։
Հեռի է՛ ՚ի մեղաւորաց փրկութիւն.
զի զիրաւունս քո ոչ պահեցին։
Գթութիւնք քո բազում են տէր.
ըստ իրաւանց քոց կեցո՛ զիս։
Բազում են որք հալածեն եւ նեղեն
զիս. եւ ՚ի վկայութեանց քոց ես ոչ խոտո
րեցայ։ Հայէի յանզգամսն եւ մա
շէի. զի զպատուիրանս քո ոչ պահեցին։
Տե՛ս՝ զի զպատուիրանս քո սիրեցի.
տէր՝ ողորմութեամբ քով կեցո՛ զիս։
Սկիզբն բանից քոց ճշմարտութիւն է.
յաւիտեան են ամենայն իրաւունք ար-
դարութեան քո։ Իշխանք հալածե
ցին զիս ՚ի նանիր. եւ ՚ի բանից քոց
երկեաւ սիրտ իմ։ Ցնծացայ ես ՚ի
բանս քո՝ որպէս որ գտանէ աւար
բազում։ Զմեղս ատեցի եւ անար-
գեցի. եւ զօրէնս քո սիրեցի։
Եօթն անգամ յաւուր օրհնեցից ըզ
քեզ վասն իրաւանց եւ արդարութեան քո։
Խաղաղութիւն բազում է այնոցիկ
որք սիրեն զօրէնս քո. եւ ոչ գոյ ՚ի

նո

նա գայթակղութիւն։ Սպասեցի փրկութե քում տր · և զպատուիրանս քո սիրեցի։ Պահեաց անձն իմ զվկայութիւս քո · և սիրեաց զնս յոյժ։ Պահեցից զպատուիրանս և զվկայութիւնս քո · զի ամ ճանապարհք իմ առաջի քո են։ Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տր · ըստ բանի քում իմաստուն արա զիս։ Մտցեն աղօթք իմ առաջի քո տր · և բանիւ քով փրկեա զիս։ Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւս քո · յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւս քո։ Խօսեսցի լեզու իմ զբանս քո · զի ամ պատուիրանք քո արդարութք են։ Եղիցի ձեռն քո՛ կեցուցանել զիս · զի զպատուիրանս քո ընտրեցի։ Ցանկացայ փրկութե քում տր · և օրէնք քո խօսք իմ էին։ Կեցցէ անձն իմ · օրհնեսցէ զքեզ · և իրաւունք քո օգնեսցեն ինձ։ Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ · խնդրեա զծառայս քո՝ զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։

Փառք հօր և որդւոյ և՛։

Ի քէն հայցեմք Հայր գթութեանց և Աստուած մխիթարութեանց․ ի տխրական գիշերային մթար-ձեալ ժամուս․ մխիթարեա զմեզ ի տրտմութեանց մեղաց․ և շնորհեա զուրախութիւն գործովք ար-դարութե․ աղաչանօք ամենասրբոյ քո Աստուածածնին և ամենայն սրբոցդ․ Բաց քաղցրագոյն Աստուածային քոյ հրամանի կոչման որդի Աստուծոյ․ եղեալ եմք առաջի քո յերկնային աշխատեալք և ծանրաբեռնեալք․ թեթևացո ի ծանրութեանց մեղաց զան-ձինս․ և զօրացո բառնալ կամաւ զքաղցր լուծ քոյ պատուիրանաց․ աղաչեմ։ Պաղատիմք առ քեզ հո-գւով ի հանգստեան հասեալ ժա-մուս մարդասէր հոգի Աստուծոյ․ յորժամ նորոգես զերեսս երկրի և

վերըստին ըստամանմամբ զորդիս մարդ-
կան. նորափետուր զարդարեալ ընդ
ննջեցելոյն մեր ընդ ծնեալսն ի քէն
սբ. աստուածածնաւն. ամէն։ Ո կենդա-
նագիր անմարատ ծնողի քո արկա-
նեմք առաջի անոխակալ տրութե
ըդ քո. յորժամ գաս փառօք հօր
դատել ընդ թշնամին խաչին քոյ.
ներեալ յանցանաց մերոց բարեխօ-
սութբ մօր քոյ և կուսի. աղաչեմք
ընդ քեզ զտէր պահպանեալ ընդ մեզ
ընդ հովանեաւ խաչի քո ամ ուրբ։
Հաղորդս արա և զմե զտէր ընդ
սրբոց քոց առաքելոցն. որք արժա-
նի եղեն տեսանել ընդ քեզ ի յարու-
թեան քո. արժանաւորեա տէ-
ր տեսանել ընդ քեզ ի միւսանգամ
քո գալըստեանն. օրհնութի առա-
քելին ի բարձունս։ Ի նըրանիլ
քո յատենի դատաստանի ահեղ. աղա


ճեա

չափովք որք զԱստուածածինն՝ յերկեամ ըղձիւն
Ձեռն ցնծան ուրախ ը միր. յորժամ գայցես
մեծապայծառ փառօքդ. քաւիչ քեզ են փառք
միշտ յաւիտեանս ամէն։

ՃՀ Սրբուհի Մարիամ. սափոր
ոսկի՝ և տապանակ կտակարանաց.
որ զ ի վերուստ ըզ հացըն կե-
նաց պարգևեցեր քաղցրութեամբ բնութեա.
առ նա միշտ բարեխօսեա փառաւո՛ր
քաւութեան մեղաց մերոց։
Դրունք անմարմնոց հրեշտակաց.
քեզ երանեն ամենօրհնեն կոյս մա-
րիամ. որ զ ր զէակից բանն որ
ընդ հօր կրեցեր ի քեզ անմարմինն
պէս. առ նա միշտ բարեխօսեա վա-
քաւութ։ Վասն որոյ և մեք հաւատ-
ացեալքս քեզ երկրպագեմք քա-
և աստուածածնիդ հայցեմք ի քէն. բա-
րեխօսութ Աստուածածնի զԱստուածային
ընդ քո ծնեալ յանձինս մեր.



որհ

օրհնեմք ընդ քեզ ՚ի յարութեն երե-
կոյիս ահաւոր թագաւորի:

Առաքեալք էք աստուածոյ՝ · ընտ- եշ
րեալք ՚ի սկզբանէ նախ քան զաշ-
խարհս՝ · որք էք արժանի եղէք
տեսանել զամենատեսըն հրեղինաց՝ ·
բարեխօսեցէք առ տէր՝ վասըն ման-
կանց եկեղեցւոյ: Օրհնեալք էք
քրիստոսի՝ · համբարձեալք աստուա-
ծայինըն խորհըրդոցն՝ · որք էք
՚ի հասանելոյ մեղաց ծովէն՝ վերա-
ծէք զմարդիկ ՚ի կեանս անմահս՝ ·
բարեխօսեցէք: Պերճացեալք էք քան
ըզ բնաւս՝ · անճառելոյն հաւատք
երանութեն՝ · որք էք ՚ի գալըստեան
տեառըն նստջիք յերկոտասան ա-
թոռսըն քրիստոսի՝ · բարե:

Որք ըռածակեալ պանծեցին յանեղա- ուր
չէն դրախտին ընդ ճանապարհ
ծառոյն կենաց՝ · քրոբէական

հոյլքըն բոցեղէն սրովբէիւք · անմար-
արտափայլեալ ցուցար յերկրի ած-
ազմորդ փայտ կենաց և փրկութեան ·
զքեզ օրհնեն մանկունք նորք
սուրբ եկեղեցւոյ :

Սաբեկայ ծառոյն վերաբերեալ
խոյ յողջակէզ փոխանակ Իսա-
հակայ · այլ ի վերայ քո զե-
նաւ գառն անարատ · ի հաշտու-
թիւն հօր և ի քաւութիւն ընդ մեղաց
մեր · զքեզ օրհնեմք ման:

Պարծանք պօղոսեան դաւանեալ
ընդ քեզ աստուածային բանին՝ տեղի և
զօրութեան · քանզի քեզանով ապրե-
ցաք ի խաւարանօք և յաննմարմին զա-
զանէն · և ի վեր քոյ հեղեալ շնորհք
անսպառական արեանն՝ ընդ կողածնին
Ջրհեղեղանց ընդ զմեղս · զքեզ օրհ:

Արկանելով հօտ ընտրեալ · զոր
հովուէրդ քոյ թողեալ յերկինս ·
Եւ

Եւ եկեալ ՚ի խնդիր մեզ մոլորե-
լոցս · որով լցեալ զթիւ հարիւ-
րորդ՝ · այսօր ուրախութի ՚ի յերկինս
երկնաւորացդ՝ · աղաչեմք ընդ ձեզ
բարեխօս լերուք առ տէր՝ վասն
քաւութեան մեղաց մերոց։
Տեսանօղք աննտեսից՝ · խորհր
դածուք խորոցն աստուածոյ · որք
իջեալք ընդ միածնին սպասաւորել
տնօրէնութեանն՝ ՚ի ծննդեանն
աւետաւորք հովուացն · և կանանցն
իւղաբերից՝ կենաց քարոզք ընդ
կենդանութեանն՝ · աղաչեմք։
Պահապանք անշիջանելի՝ · բանա
կք տն շուրջ զերկիւղածովք · բա
րեկամք ազգի մարդկան՝ միջնորդք
մահու և յարութեան՝ · միքայել և
գաբրիէլ մեծք՝ · որ կայք միշտ
առաջի աթոռոյն Երրորդու-
թեանն՝ · աղաչեմք ըզ։



Երկ

գշ Երկնաւոր փեսայ • անարատաւէտր
լոյս իմանալի • որ ի յերկնից ի
ջեր • ի սէր հարսին քո եկեղեցւ
ոյ • զոր խոստացար քեզ բարձ
կալն և փեսաւէրն քո յաւիտենից •
արին մաղթանօք ողորմեա։
Բազմակերպայցն անհաս և անճառ
ի սերովբէից • սրբութեանց ... և
ոտից բազմելոց • խոնարհեցար ի յոր
դանան • հայցելով ի ծառայ
էն • մաքրութիւն ջրոյ ի լուսաւոր
ըզ մեզ մկրտեալս • արին մաղ։
Որ յամբողջութեան վերկայեցար գառն
աստուածոյ բարձող մեղաց • զոր
գերագոյն արդարոց • ծանուցեր
մեծ ի ծննդոց կանանց • և
ձայն օրհնութեան • որ և ի դրժոխս ըզ
փրկական գալստեան քո քարոզ
զեցն • արին մաղ։


Սաղ

Սաղմոս։

Հոգւոյն հանգուցելոց քո Աստուած՝ տուր հանգիստ և ողորմութիւն. և մեզ մեղաւո-րացս՝ շնորհեա զթողութիւն յանցանաց։

Քարոզ։

Եւ ևս խաղաղութեան զտէր աղ՟.

Վասն հանգուցել հոգւոյն աղաչես-ցուք զերկինքն մերոյ՝ զի զնա ընդ ար-դարսն դասեսցէ. և զմեզ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ։ Ամենակալ՟։

Աղօթք։

Քրիստոս որդի Աստուծոյ՝ անոխակալ և բարերարութ. զթամ քո արարչական սիրովդ՝ ի հոգին հանգուցել ծառայից քոց։ Յիշեա յա-ւուր մեծի գալստեան արքայութեան քո։ Որ արժանի ողորմութեան. քաւութեան և թողութեան մեղաց։ Դասաւորել պայծա-ռացն ընդ սրբոց քո յաջ. կողմեան դասուն։ Զի դու ես Տէր և արարիչ ամենեցուն, դատաւոր կենդանեաց և մեռելոց։ Եւ քեզ վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ։ Այժմ և միշտ և յա՟։

Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։

Հայր մեր որ յերկինս ես՟։



Ի Թաբօր երեւք՝ եւ տէր մարմնա ցեալ։
յաղօթելն էր՝ այլակերպե ցեալ։
Պետրոս մինչ խօսէր՝ ամպ հովանա ցեալ։
ի վերին՝ ամպէ ձայն Հօր՝ Որդի սիրե ցեալ։

Կարգաւորութի՛ հասարակաց աղօթից հանգըս-
տեան ժամուն։ Որ կատարի ՚ի դէմս Հօրն․
Զ է պահպանողական աղչ ժամանակին պահես-
ցէ զմեզ ՚ի խաւարային գիշերին։

ԱՌԱՔԵԱ ՏԷՐ․ ԶԼՈՅՍ
քո և զճշմարտութիւն քո․ զի ա
ռաջնորդեսցեն ինձ և հանցեն
զիս ՚ի լեառն սբ և ՚ի յարկս քո։
Մտից առաջի սեղանոյ այ առ ած․ որ
ուրախ առնէ զմանկութի իմ։
Խոստովան եղէց քեզ օրհնութ ած ած իմ։
Ընդ՝ ընդէ՛ր տրտում ես անձն իմ․ կամ
ընդէ՛ր խռովես զիս․ յուսա՛ առ ած․ խոս
տովանեմ նմա․ փրկիչ երեսաց իմոց ած է։
Փառք հօր և որդւոյ և․ այժմ և"։
Նւ ևս խաղաղութե զօր աղա"։
Օրհնութի և փառք հօր և որ"։


Աւ

Եկեսցէ՛ ի վերայ իմ ողորմութիւն քո Տէր.
և փրկութիւն քո ըստ բանի քում։
Տաց պատասխանի որք նախատեն զիս
բանիւք՝ զի ես ի բանս քո յուսացայ։
Մի՛ ի բաց առներ ի բերանոյ
իմմէ զբան ճշմարտութեան մինչև
յոյժ՝ զի ի իրաւունս քո յուսացայ։
Պահեցի զօրէնս քո յամենայն ժամ. յաւի-
տեան և յաւիտեանս յաւիտենից։
Գնայի ես յանդորրու՝ զի զպատու-
իրանս քո խնդրեցի։
Խօսէի զվկայութիւնս քո առաջի թա-
գաւորաց և ո՛չ ամաչէի։
Խորհէի ի պատուիրանս քո՝ զոր սի-
րեցի։ Համբարձի զձեռս իմ ի պա-
տուիրանս քո զոր սիրեցի. և խոր-
հէի յարդարութիւնս քում։
Յիշեա՛ զբան ծառայի քո՝ յոր և
յուսացուցեր զիս։
Այս մխիթարեաց զիս ի խոնարհու-
թեան իմում. զի բանն քո կեցոյց զիս։
Ամբարտաւանք անիրաւեցին յոյժ.
այլ յօրինաց քոց ես ո՛չ խոտորեցայ։

 Յի

Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից
տէր և մխիթարեցայ։
Տրտմութիւն կալաւ զիս 'ի մեղաւո-
րաց. և ոյք թողին զօրէնս քո։
Գովելի էին ինձ իրաւունք քո 'ի տե-
ղւոջ պանդխտութեան իմոյ։
Յիշեցի 'ի գիշերի զանուն քո տէր.
և պահեցի զօրէնս քո։
Այս եղև ինձ ճանապարհ 'ի կեանս.
զի զարդարութիւնս քո խնդրեցի։
Զանօրէնսն ատեցի և զօրէնս քո
սիրեցի։
Օգնական և փրկիչ իմ ես դու.
և ես 'ի բանս քո յուսացայ։
'Ի բաց եղերուք յինէն չարք. և քըն-
նեցից զպատուիրանս այ իմոյ։
Օգնեա ինձ ըստ բանի քում և կե-
ցո զիս. և մի՛ յամօթ առներ զիս 'ի
յուսոյ իմմէ։
Օգնեա ինձ և ապրեցո զիս. և խոր-
հեցայց զիրաւունս քո յամ ժամ։
Անարգեցեր զամենեսեան որք ապըս-
տամբք եղեն յարդարութեանց քոց. զի
անիրաւութիւն էին խորհուրդք նց։


Ըն

Անցաւորս համարեցայ զամենայն մեղաւորս երկրի. վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո։

Բեւեռեա ընդ երկիւղ քո զմարմինս իմ. զի ՚ի դատաստանաց քոց երկեայ յոյժ։

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տէր. ըստ բանի քում իմաստուն արա զիս։

Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր. և բանի քում փրկեա զիս։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւն քո՝ յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։ Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամենայն պատուիրանք քո արդարութիւն են։

Եղիցի ձեռն քո՝ ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի։

Ցանկացայ փրկութեան քում տէր. և օրէնք քո խօսք իմ են։

Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես որպէս զոչխար կորուսեալ. խնդրեա զծառայ քո՝ զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։

Մի՛ եկեսցեն ՚ի վերայ մեր որք ամ_
բարշտանիցեն. և ձեռք մեղաւորաց
մի՛ դողդողեսցեն զմեզ։

Ընդ անկցին ամքեան ոյք գործեն
զանօրէնութի. մերժեսցին և այլ մի՛
կարասցեն հաստատել։

Նա ՚ի տէր յուսացայ. ցնծացայց և
ուրախ եղէց յած փրկիչ իմ։

Տր տր ես ինձ զօրութի. և կացոյց
զոտս իմ ՚ի հաստատութե. ՚ի վր պա_
րանոցի թշնամւոյն կացոյց զիս. և
հանգոյց զիս երագ երագ։

Որ բնակեալն է յօգնութի բարձրելոյն,
Ը հովանեաւ այ յերկնից հանգիցէ։

Ասասցէ տն ընդունող իմ ես դու.
ապաւէն իմ ած՝ և ես յուսամ ՚ի նա։

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսո_
ղին. և ՚ի բանիցն ՚ի խռովութէ։

Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ.
և ՚ի հովանի թևոց նր յուսասցիս։

Ոպ զզէն շուրջ եղիցի զքև ճշմար_
տութիւն նորա։

Ո՛չ երկիցես դու յերկիւղէ գիշե_
րի. և ո՛չ ՚ի նետէ՝ որ թռչի ՚ի տուէ։

Յիրէ որ շրջի 'ի խաւարի · 'ի գայթակ
ղութէ դիւին 'ի հասարակ աւուր։
Անկցին 'ի կողմանէ քումմէ հազարք
և բիւրք ընդ աջմէ քումմէ · և առ
քեզ նոքա ոչ մերձեսցին։
Բայց միայն աչօք քովք հայեսցիս
դու · և զհատուցումն մեղաւորաց
տեսցես · զի դու տէր յոյս իմ ես։
Զբարձրեալն արարեր քեզ ապա-
ւէն · ոչ հասցեն առ քեզ չարք · և
տանջանք մի' մերձեսցին 'ի յարկս քո։
Հրեշտակաց իւրոց պատուիրեսցէ վասն քո
'ի պահել զքեզ յամենայն ճանապարհս քո։
'Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ
զի մի' երբէք հարցես զքարի զոտն քո
'Ի վերայ իժից և քարբից գնասցես դու
և առ ոտն կոխեսցես զառիւծն և զ
վիշապն։ Զի յիս յուսացաւ և
փրկեցից զնա · հովանի եղէց նմա'
զի ծանեաւ զանուն իմ։
Կարդասցէ առ իս և ես լուայց նմա
և առ նմա եղէց 'ի նեղութեան։
Փրկեցից և փառաւոր արարից զնա ·
Երկայն աւուրց լցուցից և ցուցից
նմա զփրկութիւն իմ։

Առ քեզ տէր համբարձի զաչս իմ որ
բնակեալդ ես յերկինս։
Որպէս աչք ծառայի ի ձեռս տն
իւրոյ. եւ որպէս աչք աղախնոյ ի
ձեռս տիկնոջ իւրոյ։
Նոյնպէս են աչք մեր առ քեզ տր
ած մեր՝ մինչեւ ողորմեսցիս ի վր մեր։
Ողորմեա մեզ տր՝ ողորմեա մեզ զի
բազում լցաք արհամարհանօք։
Առաւել լցան անձինք մեր նա
խատանօք որք նախատէին զմեզ. եւ
արհամարհանօք ամբարտաւանից
Ած՝ յանուն քում կեցո զիս. եւ ի
ի զօրութեան քում իրաւ արա ինձ
Ած՝ լուր աղօթից իմոց. ունկնդիր լեր
բանից բերանոյ իմոյ։
Զի օտարք յարեան ի վր իմ. եւ հզօրք
խնդրեցին զանձն իմ. եւ ոչ համարե-
ցան զքեզ ած առաջի իւրեանց
Ահա ած օգնական իմ. եւ տր ընդու-
նող հոգւոյ իմոյ։
Դարձուսցէ զչարն ի թշնամիս
իմ, ճշմարտութեամբ քով սատակեա զնոսա
Կամօք իմովք պատարագս մատ-

տուեցից քեզ. և խոստովան եղէց ա-
նուան քում տէր՝ զի բարի է։
Յոյժ նեղութէ իմմէ փրկեցեր զիս.
և ՚ի թշնամիս իմ ետես ակն իմ։
Օրհնեալ ես տէր այ հարցն մե-
րոց. գովեալ և առաւել բարձրացեալ
յաւիտեանս։ Եւ օրհնեալ է անուն
սբ փառաց քոց. գովեալ և՛՛։
Օրհնեալ ես ՚ի տաճարի փառաց սրբ-
ութեան քո. գովեալ և՛՛։
Օրհ՛՛ ՚ի վր աթոռոյ արքայութե քո. գ՛՛
Օրհնեալ ես որ նստիս ՚ի քերոբէս և
հայիս յանդունդս. գո՛՛։
Օրհ՛՛ ՚ի վր հաստատութե երկնից. գո՛՛։
Օրհնեցէք զած ՚ի սրբութեան նր.
օրհնեցէք զնա ՚ի հաստատութեան
զօրութեան նորա։
Օրհնեցէք զնա ՚ի զօրութե նր. օրհ
նեցէք զնա ՚ի բազում մեծութե նր։
Օրհնեցէք զնա ՚ի ձայն օրհնութե. օրհ
նեցէք զնա սաղմոսիւք և օրհնութբ։
Օրհնեցէք զնա ցնծութբ. գովեցէք
զնա ուրախութբ։
Օրհնեցէք զնա ՚ի բանս քաղցր. գո

վեցէք զնա 'ի բարբառ ընելիս:
Օրհնեցէք զնա 'ի ձայն գոհութե.
ամ հոգիք օրհնեցէք զտր:

Արդ արձակեա զծառայս քո տէր՝
ըստ բանի քում 'ի խաղաղութի. զի
տեսին աչք իմ զփրկութի քո զոր պատ
րաստեցեր առաջի ամ ժողովրդեան:
Լոյս 'ի յայտնութի հեթանոսաց. և
փառք ժողովրդեան քում իսրայելի:
Ձգեցեր զձեռն քո՝ և փրկեաց զնս
աջ քո. և տր հատուսցէ ընդ իմ:
Տր ողորմութի քո յաւիտեան զգործս
ձեռաց քոց մի՛ անտես առներ:
Տր՝ հան 'ի բանտէ. զանձն իմ. գոհա
նամ զանուանէ քումմէ:
Աւ քեզ սպասեն. արդարքն մինչև
հատուսցես:

Մեծացուսցէ անձն իմ զտր. և ցն
ծասցէ հոգի իմ ամ փրկչաւ իմով:
Այց արար 'ի վերայ խոնարհութե
աղախնոյ իւրոյ. այսուհետև երա
նեսցեն ինձ ամ ազգք:
Արար ընդ իս մեծամեծս հզօրն. և
սբ է անուն նորա:



Ողոր

Ողորմութիւն արար ազգաց յազգս
երկիւղածաց իւրոց. և արար զօ-
րութիւն բազկաւ իւրով:

Ցրուեաց զամբարտաւանս 'ի մտաց
սրտից. և քակեաց զհզօրս յաթոռոց:

Զխոնարհս բարձրացոյց. զքաղցեալս
ելից բարութբ. և զմեծատունս ար
ձակեաց ունայնս.

Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրոյ՝
յիշելով զողորմութի իւր:

Որպէս խօսեցաւ առ հարսն մեր՝ Աբ
րահամու և զաւակի նր յաւիտեան:

Տուր զօրութի ծառայի քում. կեցո
զորդի աղախնոյ քո. և արա առ իս
նշան բարութե:

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն.
զի դու տր օգնեցեր ինձ և մխիթա
րեցեր զիս: Փառք հօր և':

Մաղթանք:

Անձն իմ'ի ձեռս քո է յամ ժամ
և'ի տր խաչ քո յուսացեալ եմ
Թագաւոր երկնաւոր. զխաղաղութի
տրց քոյ բարեխօս ունիմ առ քեզ:
Որ երկայնամիտ ես առ ամենեսեան՝
մի'

մի՛ անտես առներ զապաւինեալս ՚ի քեզ. այլ պահեա պատուական և սբ. խաչիւ քով ՚ի խաղաղութեան:

## Քարոզ:

Աղաչեսցուք զամենակալն Աստուած. և խնդրեսցուք ՚ի նմանէ զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութեան որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս. ՚ի գիշերական խռովութենէ ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր մինչև ՚ի կատարումն ժամանակի ամաց մերոց: Ամէն: Զհանդիստ գիշերիս խաղաղութ": Զհրեշտակ: Զքաւութ: Զսրբ: Յու ևս մի: Զանձինս: Ողորմեաց:

## Աղօթք:

Տէր Աստուած մեր դու պահեա զմեզ խաղաղութեամբ ՚ի գիշերիս յայսմիկ և յամ ժամանակի: Ընդ սբ. երկիւղ քո թևեալ պահեա զմիտս և զխորհուրդս մեր: Որպէս զի յամ ժամ քև պահպանեալ լինիցուք յորոգայթից թշնամւոյն: Եւ քեզ հանցուք զօրհնութի և զփառս հօր և որդւոյ և":

## Խաղաղութեան Ողջունեցուն:

Հրեշտակի խաղաղութեան յանձն առա զանձինս մեր Տր զօրութեանց: Որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս ՚ի տուէ և ՚ի գիշերի. յարթնութեան և ՚ի հանգստեան մերում. զի դու ես արարիչ լուսոյ և հաստիչ գիշերի: Նոյնժամ աղաչեմք զքեզ Տր ած մեր՝ զհանգիստ գիշերիս շնորհեա խաղաղութբ անցուցանել. և հասանիլ ՚ի պաշտօն առաւօտու յերկրպագութի և ՚ի փառաբանութի ամենասուրբ երրորդութեանդ: Այժմ և՛:

### Սաղմոս, 4:

Խաղաղութբ յայս և ՚ի սոյն ննջեսցուք և զարթիցուք. զի դու Տր միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ: Ի կարդալ իմում լուաւ ինձ ած արդարութեան. ՚ի նեղութեան ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ և լուր աղօթից իմոց: Որդիք մարդկան մինչև յե՞րբ էք խստասիրտք. ընդէ՞ր սիրէք զունայնութի և խնդրէք ըզսուտ. Ծանիջիք զի սքանչելիս արար Տր ընդ սուրբ իւրում. և Տր լուիցէ

 ինձ

ինձ՚ի կարդալ իմում առ նա։ Բարկա
նայք և մի՛ մեղանչէք. զոր ինչ ասէք
՚ի սիրտս ձեր, յանկողինս ձեր զղջա
ցարուք։ Մատուցէք պատարագս
արդարութեան և յուսացարուք ՚ի տէր։
Բազումք ասեն թէ ո՞ ցուցցէ մեզ
զբարութիւն տն. Նշանեցաւ առ մեզ լոյս
երեսաց քոց. և ետուր ուրախութի
սրտից մերոց։ ՚Ի պտղոյ ցորենոյ գի
նւոյ ձիթոյ իւրեանց լցուցեր զնս։
Խաղաղութբ յայս և ՚ի սոյն ննջեսցուք
և զարթիցուք. զի դու տր միայն առա
նձին յուսով քով բնակեցուցեր զմեզ։
Ալէլուիա Օրթի։ Խաղաղութիւն
Ամենեցուն։ Եւ ընդ հոգւոյդ քում։
Երկիւղածութբ լուարուք։
Սրբոյ Աւետարանին որ ըստ Յօհաննու։
Փառք քեզ տր այծ մեր։ Պռօսխումէ
Ասէ տրծ։ Տէրն մեր Յս Քս ասէ։
Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ
հատն ցորենոյ անկեալ յերկիր
մեռանիցի. ինքն միայն կայ։
Ապա եթէ մեռանիցի, բազում ար
դիւնս առնէ։



Որ

Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա. և որ ատէ զանձն իւր յաշ͞խս յայսմիկ, ի կեանս յաւիտենականս պահեսցէ զնա։ Եթէ ոք զիս պաշտեսցէ, զկնի իմ եկեսցէ. և ուր ես եմ. անդ և պաշտօնեայն իմ եղիցի։ Եթէ ոք զիս պաշտիցէ. պատուեսցէ զնա Հայր իմ։

Փառք քեզ տէր ա͞ծ մեր։

ք͞րզ Ս͞բ խաչիւս աղաչեսցուք զտէր՝ զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց. և կեցուսցէ շնորհիւ ող″։

ա͞ղ Պահպանեա զմեզ ք͞ս ա͞ծ մեր ընդ հովանեաւ ս͞բ և պատուական խաչի քո ի խաղաղութ͞ե. փրկեա յերևելի և յաներևոյթ թշնամեաց։ Արժա նաւորեա գոհութ͞բ փառաւորել զքեզ ընդ Հօր և ս͞բ Հ͞գւոյդ. այժմ և″։

Օրհնեալ տ͞ր մեր յ͞ս ք͞ս. ամէն։

Հայր մեր որ յերկինս″։

ժող Ընկանիմք առաջի քո տ͞ր ա͞ծ ա͞ծ ի͞ն և աղաչեմք զանարատ զկոյսդ՝ բարե խօսեա վ͞ս անձանց մերոց. և աղաչեմ զմիածին որդիդ՝ փրկել զմեզ ի փոր ձութենէ և յամ͞ն վտանգից մերոց։

Որ արձակիչդ ես կապելոց՝ պարգեւատու ամցուն. այսօր հայցմամբ ծերունւոյն՝ արձակեա եւ զիս զբազմամեղս՛ի կապանաց մահու՛ի կեանս յաւիտենից։

Մաղթանք զօրաւորք ընդդէմ արհաւրաց գիշերայնոյ։ Նոյնպէս Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն։ ՂԲ

Ընկալ քաղցրութբ տր ած հզօր՝ զդաւանացողիս զաղաչանս։

Մատի՛ր գթութեամբ՝ առ պատկառեալս զխնդրս։ Փարատեա՛ անձնապարգեւ՝ զամօթական տխրութս։ Բարձ յինէն ողորմած՝ զանըմբերելի ծանրութիւնս։ Անջրպետեա՛ հզօրաւոր՝ զմահացու կրթութիւնս։ Նուաճեա՛ մի՛շտ յաղթօղ՝ զխաբողին հաճութիս։ Բացատրեա՛ վերնայինն զմռլելոյն մառախուղ։ Անքեա՛ կեցուցիչ՝ զկորուսչին ընթացմունս։ Յրուեա՛ ծածկատես՝ զըմբռնողին չար զօմունս։ Խորտակեա՛ անքննին զմարտողին դիմեցմունս։ Տեառնագրեա՛ քո անուամբդ՝ զլուսանդոյս



երդ

երդ յարկիս։ Պարփակեա՛ քո ձեռամբդ
զաւստատաղ տաճարիս։ Պծագրեա՛
քո արեամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս
Կերպացո՛ զքո նշանդ՝ ՚ի հետս ելից
մաղթողիս։ Ամրացո՛ քո աջովդ՝ ըզ
հանգստեանս խշտի։ Մաքրեսցես
՚ի հաղըից՝ զծածկարան անկողնոյս
Պահեսցես քո կամօքդ՝ զտառապեալ
անձն հոգւոյս։ Անխարդախս արաս
ցես՝ զքո շնորհեալ շունչ մարմնոյս։
Կացուսցես շրջափակ՝ զպար զօրուդ
երկրայնոյ։ Կարգեսցես ՚ի դիմի՝ ե̄
դեմ դիմացն դասու։ Տո՛ւր հան
գիստ բերկրութե̄ մահահանգոյն
նիրհման ՚ի խորութեան գիշերիս։
Բարեխօսութբ̄ և հայցուածովք սըր
բուհոյ Ածածնիդ՝ և ամ̄ ընտրելոց։
Մխիթարեալ պարուրեա՛ զպատուհան
տեսութե̄ց զգայարանացս իմաստից։
Անդարձուցելի զետեղմամբ, ՚ի ծփա
կման խռովութե̄ց, կենցաղական զբաղ
մանց, անըմբռնական երազոց, խոլականաց
ցնորից։ Յիշատակաւ քո յուսոյդ՝
անշիջանելի պայծառացանել։ Եւ սթա
փել

փեսայ վերստին՝ ՚ի ննջմանէ ծանրու-թե՛՝ ամենազգաստ արթնութե՛՝ հոգենորոգ զուարթութե՛ ՚ի քեզ արձնութեամբ։ Ո՜վ այս ձայն մաղթանաց՝ բուրմամբ հաւատոյ՝ քեզ ամենօրհնել թագաւոր փառաց անճառից՝ փեսայանողաց երկնագումար խմբից երգակցեալ յերկինս առաքել։ Ո՜վ դու փառաւորեալ ես յամ՟ արարածոց յաւիտեանս

յաւիտենից ամէն։

Նորին օրհնութ՟ն Գրիգորի Նար՟ · 41։

Որդի ամ՟ կենդանեաց՝ օրհնեալ դ՟ յամ՟։ Հօրդ ահաւորի անքննին ծնունդ · որ տկարանայ առ ՚ի քէն և ոչինչ։ Որ ՚ի ծագել անստուերն շուքից ողորմութե՟ քո փոխ՝ հալին մեղք · հալածին դեք · ջնջին յանցանք · խզին կապանք · խորտակին շղթայք · կենդանածնին մահացեալք · բժշկին հարուածք · ողջանան վէրք · բառնին ապականութիւնք · տեղի տան տխրութիւնք · նահանջին հեծութիւնք · փախնու խաւարն · մեկնի մէգն · մերժի մառախուղն · փարատի մուայլն · ապաքէն աղ

Ջամուղջն · վերանոյ մութն · գնայ գի-
շերն · տարագրի տագնապն · չքանան
չարիքն · հալածին յուսահատութիւնք։
Լուծ թղթուրք ձեռնդ քո · ամենակալ՝ քա-
ւիչդ ամե։ որ ո՛չ եկիր կորուսանել
զմարդկան հոգիս, այլ՝ կեցուցանել ·
Թո՛ղ ինձ զանթիւ չարիսն իմ բազում
ողորմութեամբդ։ Զի դու միա՛յն ես յերկ-
նի անձու, և յերկրի անզին։ ՚ի տարր
գոյի՝ և յեզրս ծագաց Տէր։ Սկիզբն
ամի՝ և յամի · ամ լրմամբ օրհնելդ
՚ի բարձունս։ Լուքեզ ընդ Հօր և
Հոգւոյդ սբյ վայելէ փառք՝ յաւի-
տեանս ամէն։

Աղօթք խորհրդական երգոց անձանց հաւատա-
ցելոց ՚ի Քրիստոս։ Զոր արարեալ է տն
Ներսէս Հայոց կաթողիկոսին։

Հաւատով խոստովանիմ և եր-
կրպագանեմ քեզ Հայր և
Որդի և Սուրբ Հոգի · անեղ և
անմահ բնութիւն · արարիչ հրեշտակաց և
մարդկան և ամ եղելոց։ ողորմեա՛
քո արարածոցս՝ և ինձ բազմամեղիս։



Հա

Հաւատով խոստովանիմ և երկիրպա
գանեմքեզ՝ անբաժանելի լոյս՝ միա
նական սբ երրորդութի և մի ածութի·
արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի·
հալածեա՛ ՚ի հոգւոյ իմմէ զխաւար
մեղաց և անգիտութե· և լուսաւորեա՛
զմիտս իմ ՚ի ժամուս յայսմիկ՝ աղօ
թել քեզ ՚ի հաճոյս և ընդունիլ ՚ի
քէն զխնդրուածս իմ· և ողոր″։

Հայր երկնաւոր ած ճշմարիտ՝ որ ա
ւաքեցեր զորդիդ քո սիրելի ՚ի խըն
դիր մոլորեալ ոչխարին· մեղայ յեր
կինս և առաջի քո· ընկա՛լ զիս ոպ զա
նառակ որդին և զգեցո՛ ինձ զպատմու
ճանն զառաջին զոր մերկացայ մեղօք· և″։

Որդի այ ած ճշմարիտ որ խոնարհե
ցար ՚ի հայրական ծոցոյ և առեր մար
մին ՚ի սբյ կուսէն մարիամայ վս մե
րոյ փրկութե· խաչեցար՝ թաղեցար՝ և
յարեար ՚ի մեռելոց· և համբարձար
փառօք առ հայր· մեղայ յերկինս և
առաջի քո· յիշեա՛ զիս ոպ զաւազակն
յորժամ գաս արքայութբ քով· և″։

Հոգի այ ած ճշմարիտ՝ որ իջեր ՚ի

կործանման և 'ի փրկութիւնն՝ և լու-
սաւորեցեր զիս մկրտութբ սբ աւազա-
նին. մեղայ յերկինս և առաջի քո. մաք-
րեա զիս վերստին ածային հրով քով
որպ հրեղէն լեզուօք սբ զառաքեալսն. և'':
Անեղ բնութիւն՝ մեղայ քեզ մտօք
իմովք՝ հոգւով և մարմնով իմով.
մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս՝ վասն
անուան քում սբյ. և ողոր'':
Տեսող ամենի մեղայ քեզ խորհրդովբա-
նիւ և գործով իմով. ջնջեա զձեռա-
գիր յանցանաց իմոց և գրեա զանուն
իմ 'ի դպրութն կենաց. և ող'':
Քննող գաղտնեաց՝ մեղայ քեզ կա-
մայ և ակամայ՝ գիտութբ և անգի-
տութբ. թողութի շնորհեա մեղաւորիս
զի 'ի ծննդենէ սբ աւազանին մինչև
ցայսօր՝ մեղուցեալ եմ առաջի ածութն
քո. զգայարանօք իմովք՝ և ամ ան-
դամօք մարմնոյս. և ողոր'':
Ամենախնամ տր՝ դի՛ր պահպան աչաց
իմոց զերկիւղ քո սբ՝ ո՛չ ևս հայել
կարաւ. և ականջաց իմոց ո՛չ ախորժել
լսել զբանս չարութն. և բերանոյ
իմոյ

իմոյ ոչ խօսիլ զստութի. և սրտի իմոյ
ոչ խորհիլ զչարութի. և ձեռաց իմոց
ոչ գործել զանիրաւութի. և ոտից իմոց
ոչ գնալ ՚ի ճանապարհս անօրէնութե.
այլ ուղղեա զշարժումն սոցա լինել
ըստ պատուիրանաց քոց յամի. և՚՚:

Հուր կենդանի քս՝ ըզհուր սիրոյ
քո զոր արկեր յերկիր՝ բորբոքեա
յանձն իմ. զի այրեսցէ զախտ հո-
գւոյ իմոյ և սրբեսցէ զխիղճ մտաց
իմոց և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ
և վառեսցէ զլոյս գիտութեան քո
՚ի սրտի իմում. և ողոր՚՚:

Իմաստութի հօր յս՝ տուր ինձ իմաս-
տութի զբարիս խորհիլ և խօսիլ և
գործել առաջի քո յամ ժամ. ՚ի չար
խորհրդոց՝ ՚ի բանից և ՚ի գործոց
փրկեա զիս. և՚՚:

Կամեցող բարեաց տր կամարար՝ մի
թողուր զիս ՚ի կամս անձին իմոյ գը-
նալ. այլ առաջնորդեա ինձ լինել
միշտ ըս կամաց քոց բարեսիրաց. և՚՚:

Արքայ երկնաւոր՝ տուր ինձ զար-
քայութի քո՝ զոր խոստացար սիրե-

 լեաց

լեացքոց · և զօրացո՛ զսիրտ իմ ատել
զմեղս և սիրել զքեզ միայն և առ-
նել զկամս քո · և ողոր՛՛։

Խնամօղ արարածոց՝ պահեա՛ նշանա-
խաչի քո զհոգի և զմարմին իմ · ՚ի
պատրանաց մեղաց՝ ՚ի փորձութեց դի-
ւաց՝ և ՚ի մարդոց անօրինաւորաց · և յամ
վտանգից հոգւոյ և մարմնոյ · և՛՛։

Պահապան ամենեքին՝ աջ քո հովանի
լիցի ՚ի վր իմ ՚ի տուէ և ՚ի գիշերի ·
՚ի նստիլ ՚ի տան, ՚ի գնալ ՚ի ճանա-
պարհ, ՚ի ննջել և ՚ի յառնել՝ զի մ՚եր
բէք սասանեցայց · և՛՛։

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո և լնուս
զամ արարածս ողորմութեամբ քով · քեզ
յանձն առնեմ զանձն իմ · դու հոգա՛
և պահպանեա զպէտս հոգւոյ և մարմ
նոյ իմոյ յայսմհետէ մինչև յաւիտն · և՛՛։

Դարձուցիչ մոլորելոց՝ դարձո՛ զիս
՚ի չար սովորութեց իմոց ՚ի բարի սովո
րութի · և բևեռեա՛ ՚ի հոգի իմ զսոսկա
լի օր մահուն՝ և զերկիւղ գեհենոյն՝
և զսէր արքայութեն · զի զղջացայց ՚ի
մեղաց և գործեցից զարդարութի · և՛՛։


Աղ

Աղբիւր անմահութեան՝ աղբերացո՛ ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին. զի լուացից ըզմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. և՛:

Պարգևիչ ողորմութեան՝ պարգևեա՛ ինձ ուղղափառ հաւատով և բարի գործով և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդութեամբն գալ առ քեզ. և՛:

Բարերար տէր՝ հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս. քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ, և անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոց որք են ի ներքոյ երկնից. և՛:

Լոյս ճշմարիտ՝ արժանաւորեա՛ ըզհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց ի կոչման աւուրն. և հանգչել յուսով բարեաց յօթևանս արդարոց մինչև յօր մեծի գալստեան քո. և՛

Դատաւոր արդար՝ յորժամ գաս փառօք հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս, մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում. այլ փրկեա՛ զիս ի յաւիտենական հրոյն. և լսել՛ տուր ինձ



զե

զերանաւէտ կոչումն արդարոց յերկ
նից արքայութեդ․ և ողոր"։

Սիմէոնդրամ տր՝ ողորմեա ամ հաւա
տացելոց ի քեզ․ իմոց և օտարաց՝ ծա
նօթից և անծանօթից՝ կենդանեաց
և մեռելոց․ շնորհեա և թշնամեացն
իմոց և ատելեաց զթողութի՝ որք ա-
ռնս յանցանացն․ և դարձո զնս ի չա
րեացն զոր ունին վս իմ, զի ողորմու-
թեդ քում արժանի եղիցին․ և"։

Փառաւորեալ տր՝ ընկալ զաղաչանս
ծառայիս քո․ և կտրեա ի բարի զխնդր
ուածս իմ բարեխօսութբ սրբուհւոյ
Ածածնին և Յովհաննու մկրտչին․
և սրբյն Ստեփաննոսի նախավկային
և սրբյն Գրիգորի մերոյ լուսաւորչին․
և սրբց Նահապետաց՝ Մարգարէից՝ Առ-
դաքելոց՝ Մարտիրոսաց՝ Հայրա-
պետաց՝ Ճգնաւորաց՝ Կուսանաց՝
Միանձանց՝ և ամ սրբց քոց երկնա
ւորաց և երկրաւորաց․ Եւ քեզ
փառք և երկրպագութի անբաժա-
նելի ընդ Երրորդութեդ յաւիտեանս
յաւիտենից ամէն։

մ̄ սրբուհւոյ անարատ մօր քոյ
և կուսին՝ տ̄ր ընկալ զաղաչանս մեր
և կեցո՛ զմեզ։

Սբ̄ զա̄ծածինն և զա̄մ սբ̄ս բարեխօս
արասցուք առ Հայր՝ի յերկինս՝ զի կա
մեցեալ՝ ողորմեսցի և գթացեալ կեցուս
ցէ զարարածս իւր. ամէն։

Ընկալ տ̄ր զաղաչանս մեր բարեխօ
սութ̄բ սրբուհւոյ ա̄ծածնին անարատ
ծնողի միածնի Որդւոյ քո. և աղա
չանօք ա̄մ սրբց քոց. և որոց այսօր է
յիշատակ։ Լո՛ւր մեզ տ̄ր և ողորմեա՛.
ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր։
Արժանաւորեա՛ գոհութ̄բ փառաւորել
զքեզ ընդ որդւոյ և ընդ ս̄բյ հո̄"։

Օրհնեալ տ̄ր մեր յս̄ քս̄. ամէն։
Հայր մեր որ յերկինս ես"։

Օ՛ հանգստեան աղօթս և զաղաչանս
ընկալ մատուցեալ ա̄ծ ՝ի հաճոյս բարե
րար կամաց քոց։ Եւ մեր մեղաց և
բզ̄ւ յանցանացն թողու. ՝ի շնորհեա։
և քեզ փառք յաւիտեանս ամէն։

Փառք քեզ՝ տ̄ր ա̄ծ մեր որ պարգևե
ցեր զօրս զայս բարեաւ և խաղաղութ̄

անցուցանել։ Արդ̃ւէր ա̃ծ զառաջիկայ
զիշերս որ ՚ի վ̃ր մեր գալոց է՛ ՚ի մեղաց
փրկեա՛. ՚ի չարեաց ազատեա՛. և՛ ՚ի գործս
բարիս առաջնորդեա՛։ Առաւօտու
օրհնութեցն և փ̃առաբանութեցն արժանի
արա զմ̃զ հաւատացեալս անուանդ
քում սր̃յ. և պահեա՛ ՚ի խաղաղութե։
Տ̃ր ա̃ծ մեր տո՛ւր զ.քո խաղաղութի-
ն̃մ ղ̃ի. բա՛րձ զցասումն. և զպատու-
հասն ՚ի յարարածոց.քոց։ Ողորմեա՛ց
հարց և եղբարց մերոց. կենդանեաց
և հանգուցելոց։ Ողորմեա՛ց զեկեղե-
ցի՛ շինողաց. երախտաւորաց՝ պտղա-
տու՛իցն՝ սպասաւորաց. և այնոցիկ որք
ըն̃դ հովանեաւ ն̃բյ տաճարիս են հան-
գուցեալ։ Տ̃ր ա̃ծ՝ օգնեա՛ թ̃գւորաց
քրիստոնէից և իշխանացն բարեպաշ-
տից. զօրաց և զաւակաց նոցին՝ պա-
հելով ՚ի խաղաղութե։ Տ̃ր ա̃ծ մեր պա-
հեա՛ զառաջնորդս և զեղբայրութիս
մեր ամբողջ և անխռով ՚ի կամս ողոր-
մութե̃ քո։ Նշանաւ ն̃բ և պատուա՛կան
խաչի քո՝ հալածեա՛ զերևելի և զան-
երևոյթ թշնամին ՚ի սահմանաց մե-
րոց

րոց եւ ՚ի բնակութենէս մերմէ։ Փրկեա՛ զմեզ ՚ի հրոյն յաւիտենից։ Եւ քեզ փառք յաւիտեանս ամէն։

Օրհնեա՛լ եղերուք ՚ի շնորհաց սբ Հոգւոյն. հանգերո՛ւք խաղաղութբ. եւ Տն եղիցի ը ամենեսեանդ. ամէն։

Խորհուրդ ապաշխարութեան եւ դպրութեն՝ վարդապետութեն պտրգելն։ Եւ ապա քահանայն ընթեռնու ապաշխարա- [illegible] եւ ծանուցանէ ՚ի սրբութիւնն եւ ասէն ասացեալս։

"Քահանայք քո զգեցցին զարդս"։

Յիշեա՛ Տր զԴա՛ւ եւ զայն ՚ի Թիւն 384

Խնդրեսցուք հաւատով միաբանութբ ՚ի Տնէ՝ զի զողորմութի զշնորհսն իւր առաքեսցէ ՚ի վր մեր. Տրն ամենա՛։

Ողորմեա՛ց մեզ Տր Այ մեր՝ ըստ մեծի ողորմութեն քում. ասասցուք ա՛։

Եւ ասէ քահանայն երկրպագանս Տր ողորմեա՛. եւ ապա զաւշքն։ Եւ ապաշխարողն առնու շնորհատուութին եւ ասէ։

Եւ ես խաղաղու"։

